№ 172 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 10

1906

ԵՐԵՍՈՒՆԶՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 10 № 172

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊԵԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օր'երից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄՇԱԿ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
ՆԵՐԿԱՅ 1906 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ
(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 րուբլի: յուլիսի 1-ից մինչև 1 հոկտեմբերի 2 րուբլի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի:

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն): Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից:

Բագուի բաժանորդներին լրագիր հասցնելը խմբագրութեան տուած հասցէներով վերցրել է իր վրա Թադէոս Բունիաթեան (գրավաճառանոց, հայոց եկեղեցուն կից), ուստի լրագրի համարների ուշ կամ անկանոն ստացվելու դէպքում Բագուի բաժանորդները պէտք է դիմեն նրան:

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և աշխատարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով: ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“ իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Հասցէն փոխելու համար պէտք է վճարել 40 կոպէկ:

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Թիֆլիսի Հաւլաբարում գտնվող արական պրոգիմնազիան

սրանով յայտարարում է, որ վերաքննութիւնները բոլոր դասարաններում կը կատարվեն օգոստոսի 21-ին: Ընդունելութեան քննութիւնները սկսվելու են օգոստոսի 22-ին: Ուսումնական տարվայ սկզբից բացվում է այբուբենական բաժին և քննութիւնները կարգաւորելու մասին տեղեկութիւնները կարելի է ստանալ պրոգիմնազիայի գրասենեակում ամեն օր ցերեկվայ 9—12 ժամը: Ուսման սկիզբն է սեպտեմբերի 1-ին:

տռ. (հ. չ.) 1—2

Բացված է բաժանորդագրութիւն

„ՆՈՐ-ԽՕՍՔ“

Քաղաքական, հասարակական, տնտեսական ամենօրեայ թերթ

Տարեկան բաժանորդագրութիւնը 6 ր.
Ամսական . . . 50 կ.

Հասցէն ժամանակաւորապէս Тифлисъ, Сололакская, 3.

տռ. 1—3

Թիֆլիսի դատաստանական պալատի որոշմամբ «Պայծ» թերթը դադարեցված է մինչև գործի քննութիւնը, որ նշանակված է հոկտեմբերի 2-ին:

Բաժանորդներին բաւարարութիւն կը տրվի.

տռ. 1—1

Նախիջևանի Հայոց Ազգային Հոգևոր Դպրանոցի Հոգաբարձութիւնը

սրանով յայտնում է ի գիտութիւն, որ առաջիկայ ուսումնական թւականին դպրոցում բացվելու է VII մասնագիտական մանկավարժական դասարան:

Սոյն դասարան մտնել ցանկացողները կարող են խնդիր տալ մինչև օգոստոսի 15-ը՝ ներկայացնելով միջնակարգ դպրոցի աւարտման վկայագիրը:

(օգ. 2, 5, 10) 3—3

ԱՐԵԱՆ ՁԱՅՆԵՐ

Գրքի հրատարակիչ Ստեփան Մելիք-Սողոմոնեանցը յայտնում է ի գիտութիւն հասարակութեան, որ «Արեան Ձայների» 101-րդ երեսի վերջին տողում սպրդել է մի խոշոր սխալ. փոխանակ «բուրժուաեր բուլանդյիք», պէտք է լինի «հայրենիաեր բուլանդյիք»: Հրատարակիչը խնդրում է գրավաճառներին և գնող անձերին, որ յիշեալ սխալը ուղղելու համար անմիջապէս կտրեն գրքի 101-րդ թերթը:

տռ. 5—5

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վտանգների առիթով. Վերջին տեղեկութիւններ. Մի նոր ժողովածու. Հայ ուսանողական միութիւն. Բագուի պատուիրակների ընտրութիւնը. Ընտրութիւնների շուրջը. Երերուն քաղաքականութիւն. Պէտք է լսել ժողովրդի ձայնը. Կախարդական շրջանի մէջ. Ներկայ ֆինանսական դրութիւնը. Թիֆլիսի քահանաների բողոքի դէմ բողոք. Նամակ Երեւանից. Բաց նամակ Ս. Տիգրանեանին. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՎՏԱՆԳՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

I

Հաղորդակցութեան ճանապարհների փակված լինելու պատճառով, շատ ուշ են հասնում մեզ տեղեկութիւններ Զանգեզուրի գաւառից:

Երէկվայ համարում մենք տպագրեցինք ուշացած մի քանի կարեւոր դէպքերի մասին: Իսկ նորագոյնների մասին դարձեալ չունենք ճիշտ նկարագրութիւններ:

Մեզ, օրինակ, մանրամասն յայտնի չէ, թէ ինչ է կատարվել պղնձահանքերի շրջանում և այն սահմանագծի վրա, որ նայում է Նախիջևանի գաւառին:

Առայժմ մեզ հասած լուրերը ցոյց են տալիս, որ Զանգեզուրի գաւառի Թուրքերի մի մասը փախուստ է տուել դէպի Նախիջևանի գաւառը և այնտեղ պատսպարվել: Այդ Թուրքերի մէջ կան անհանգիստ տարրեր, որոնք կարող են վտանգաւոր դառնալ նաև Նախիջևանի գաւառի համար և առիթ լինել նոր ընդհարումների:

II

Մենք հաղորդել էինք, որ Օրդուբաթի շրջանում նկատվում են յուզմունքներ Թուրքերի մէջ: Այդ յուզմունքները դեռ ոչ մի լուրջ արտայայտութիւն չեն ստացել: Բայց քրիստոնեայ ազգաբնակութիւնը լարված դրութեան մէջ է և երկիւղ է կրում անակնկալ յարձակումներից:

Վարչական անձերի կողմից թէև ձեռք են առնված միջոցներ բարդութիւնների առաջն առնելու նպատակով, բայց դաւադրական տարրերը, եթէ եռանդով աշխատեն, կարող են ամեն տեսակ խառնակութիւնների սկիզբը դնել և նորից արհաւիրքներ ստեղծել մեր երկրի այդ չարաբաղդ գաւառում, որ անցեալ տարի այնքան ծանր հարուածներ ստացաւ աւերումներից և կոտորածներից: Նախիջևանի գաւառը մինչև այժմ ոտքի չէ կանգնել և դեռ մի քանի տարի էլ նա կը զգայ եղածի ծանրութիւնը:

III

Թիֆլիսում տարածված են զանազան լուրեր Նախիջևանի գաւառի մասին: Պատմում են իբրև թէ տեղի ունեցած ընդհարումների մասին: Մենք նրանց առաջ չենք բերում, որովհետև ստուգված չեն, հակասական են և յամենայն դէպս չափազանցրած: Որքան մեզ է յայտնի, գաւառում տիրում է լարված դրութիւն, բայց ընդհարումներ տեղի չեն ունեցել:

Գաւառի մի քանի գիւղեր չափազանց վրդովված են այն բանից, որ իրանց երիտասարդները շարունակում են հեռանալ դէպի պանդխտութիւն: Գիւղերը, մնալով առանց տղամարդ ոյժերի, թուլանում են իբրև համայնքներ և դառնալով անապահով պատճառ են լինում նաև մնացած գիւղացիների պանդխտութեան և ուրեմն գիւղերի ամայանալուն:

IV

Մի քանի օր առաջ, խօսելով նոյն առարկայի մասին, մենք յորդոր կարդացինք, որ գիւղերի տղամարդիկ, որոնք ներկայումս պանդխտութեան մէջ են, մտածեն իրանց անտէր թողած գիւղական ընտանիքների մասին և չը թողնեն գիւղերը բաղդի քմահաճոյքների և խաղերի տրամադրութեան:

Մեզ հասան նորանոր գանգատներ գիւղերից իրանց պանդխտող տղամարդկանց մասին: Գիւղերը պահանջում են, որ գիւղական երիտասարդները, եթէ ոչ բոլորը, գոնէ մի ստուար թւով, տանը լինեն, որպէս զի գիւղում մնացող և աշխատողները կարողանան թէ հանգիստ քնել և թէ ապահով կերպով վարել գիւ-գիւղական և տան տնտեսութիւնը:

Մանաւանդ զգալի է դառնում պանդուխտների բացակայութիւնը, երբ այս ու այն կողմից լուրեր են գալիս սպասվող յարձակումների մասին:

V

—Քանի մենք ապահով չենք, քանի մենք յարձակումներ գործողների համար հեշտ գրաւելու պատառներ ենք, այնքան էլ մեծ է ընդհարումների վտանգը:

Այդպէս է ձևակերպում գիւղում մնացած խեղճ ազգաբնակութիւնը: Նա ցանկանում է, որ շրջապատողները չը նայեն նրա վրա իբրև անպաշտպան և անապահով մնացածի վրա և չը փորձեն յարձակումներ գործելու:

—Մենք զգվել ենք, յոգնել և ուժասպառ եղել ընդհարումներից և եթէ նորից ենթարկվենք արհաւիրքների, կը կործանվենք վերջնականապէս: Իսկ յարձակումներ կարող են լինել, եթէ մենք բոլորովին անպաշտպան վիճակի մէջ կը լինենք:

Ահա ինչ են ասում գիւղական մարդիկ: Նրանք ուզում են մնալ հողի վրա և պահանջում են, որ երիտասարդ ոյժերը չը փախչեն գիւղից:

VI

Մենք անցեալ անգամ մատնացոյց եղանք, իբրև օրինակ, Ջահուկ մեծ, կենտրոնական գիւղի վրա: Եթէ ցանկանայինք օրինակների թիւը շատացնել, կարող էինք յիշել նաև Գզնուտ մեծ գիւղը, որի երիտասարդներից մի քանի հարիւր հոգի ներկայումս գտնվում են պանդխտութեան մէջ Թիֆլիսում և ուրիշ տեղեր: Այդպէս և միւս գիւղերը:

Գիւղական երիտասարդնե՛ր, գնացէք ձեր գիւղերը, ապահովեցէք նրանց վերջնականապէս, զարկ տուէք տնտեսութեան զարգացման մտցնելով բարեփոխութիւններ արհեստի մէջ և երբ բոլորովին հաստատած ու երաշխաւորած կը լինէք խաղաղութիւնը, այն ժամանակ աւելորդ աշխատաւոր ոյժերը ցրվեցէք ուրիշ կողմեր:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Գիւլեաթաղ գիւղ (Ջիվանշիր գաւառ), 5 օգոստոսի

Շաբաթ օրը, յուլիսի 29-ին, Մափրավէնդի Թուրքերը միացած իրանց հարևան Բոյ-Ահմեդլուի Թուրքերի հետ մեծ ոյժով յարձակում գործեցին իրանց սահմաններին կից ապրող Արլօվօդենիսօվսկ ռուս գաղթական գիւղի վրա, տաւարը քշելու նպատակով:

Երբ Թուրքերը գիւղից կէս վերստ հեռաւորութիւնից քշում են ռուսների տաւարը, գիւղի պաշտպանութեան համար դրած 25 կօզակները մի քանի անգամ կրակ են բաց անում անհաւասար ոյժի դէմ. Թուրքերը դրանց պատասխանում են զալպերով և առաջ են քշում տաւարը:

Այն ժամանակ, երբ կօզակները յուսահատված վերադառնում են, հաւարի են հասնում Ջանեաթաղ և Գիւլեաթաղ հայ գիւղերի երիտասարդները, որոնք շրջապատում են Թուրքերին և յետ են առնում ռուսների տաւարը և Թուրքերին քշում են մինչև իրանց գիւղի սահմանները. սպանվում է միայն մի Թուրք:

Դէպքը պատահելուց յետոյ պրիստաւը անմիջապէս գնում իր ստրաժնիկներով Մափրավէնդ, որտեղ Թուրքերը սպառնում են նրան սպանելու. նա թողնում փախչում է այնտեղից: Այս բոլորը պրիստաւի կողմից յայտնված է կառավարութեան:

Այս տարի հացի բերքը պակաս է. ամբողջ Ջիվանշիրի և Խաչէնի գաւառներին հաց մատակարարող Մարտակերտի ցանքսերը կարկտով փչացված են. ցորենի չուալը (7 պուդ) ծախվում է 9 ր.: Կորէկի ցանքսերն առատ եկամուտ են խոստանում, միայն անձրևները խանգարում են ժողովել:

Վ. քահ. Գիւլեաթաղցի

—

Փարաքար (Երևանի գաւառ), 6 օգոստոսի

Երէկ գիշեր ղարաղշլաղցի Թուրքերը մտնում են Վարմազիար գիւղը և պահապանին քնած գտնելով սպանում և գլուխը կտրում տանում են: Այս մի տարօրինակ դէպք է, որ առաջին անգամն է պատահում յիշեալ գիւղերում. Թուրքերը համարձակվում են գիշեր ժամանակ հայի գիւղ մտնել և սպանութիւն գործել: Չարագործները բռնված չեն: Յայտնված է կառավարութեան. դեռ ևս ոչ մի կարգադրութիւն չէ արված:

Անհատական սպանութիւններ պարբերաբար լինում են: Լարված դրութիւն է:

—

Շուշու ճանապարհը ապահով չը լինելով, երկաթուղու վարչութիւնը մօտ երկու շաբաթ է ինչ ապրանք չէ ընդունում դէպի Եւլախ կայարանը: Ահագին քանակութեամբ ապրանք է կուտակված յիշեալ կայարանում. այդ ապրանքների թւումն է և մի տասնեակ վագօն ալիւր, որը նշանակված է Ղարաբաղի կողմերի համար: Այսպիսի պայմաններում ապրանքների թանկանալը և սովի սպառնումը անխուսափելի է:

—

Աւազակութիւնը գնալով Նուխու ճանապարհի վրա շատանում է: Ինչպէս երևում է, զուտ Թալանի մտքով կազմված է մի խումբ, և Թալանվում են ճանապարհորդները առանց կրօնի և ազգի խտրութեան: Ամսիս 5-ին յիշեալ ճանապարհում Թալանվել են 9 կառքեր, որոնցով գնում են եղել 42 հոգի, մեծ մասամբ Թուրքեր. տարել են գլխաւորապէս փող, ժամացոյց և Թանկագին իրեր:

—

Թարթառից օգոստոսի 2-ից հեռագրում են, որ Պօլրավէնդ գիւղի մօտ (Ջիւանշ. գաւ.) Վեվերնի Թուշեկի խմբի և Թուրքերի ահագին ամբոխի միջև հրացանաձգութիւն է տեղի ունեցել: Գործին միջամտել է արտիլերիան: Վիրաւորվել են 6 զինւորներ: Թուրքերի կողմից կորուստներ շատ կան, բայց իսկութիւնը յայտնի չէ: Սպասվում է շրջակայ Թուրքերի յարձակումը: («Кавк.»)

—

Գանձակից «Т. Л.»-ին օգոստոսի 7-ին հեռագրել են հետևեալը. «Երէկ, Լաիչ գիւղի մօտ տեղի ունեցած սարսափելի հրացանաձգութեան ժամանակ, պրիստաւ Տիրկին աջողվեց ձերբակալել աւազակներ Հաջի Մուսիին և Տաշօղլիին, որոնք սպանել էին 3 բայեանցիների և ուրիշների»:

—

Հին-Նախիջևան, 4 օգոստոսի

Ըստ երևոյթին կարծես Հին-Նախիջևանի գաւառում տիրում է անդորրութիւն, բայց դա անդորրութիւն ու խաղաղութիւն չէ, այլ հայ ժողովրդի ձգտումն է դէպի կուլտուրական ու խաղաղ կենցաղը, որ և տրամադրում է այդպէս կարծել. ամեն օր նորանոր դէպքեր գալիս են մի անգամ ևս ապացուցանելու, որ Թուրք խուժանը իր խուժանապետներով հանդերձ ցանկութիւն չունի վերջ տալու իր արիւնկզակ, յափշտակիչ ու գազանացած հակումներին, դարերի ընթացքում փայփայած բնածին ֆանատիկ իղձերին, որոնց իրագործելու համար այսօր հազիւ լայն ասպարէզ է բացվել: Դեռ շատ հեռու է այն ցանկալի ապագան, երբ մեր գաւառի կիսակիրթ կամ հէնց կրթութիւնից իսպառ զուրկ հարևանները կը սթափվէին իրանց բռնած յանցաւոր ու խելակորոյս քայլերից, կըմբռնէին մարդկութեան լաւագոյն մասի սիրած ու փայփայած վսեմ մարդկային գաղափարները. իսկ Թուրքերն կը սթափեցնէ կոպիտ ոյժի դէմ կոպիտ ու իրա ոյժը ու կառավարութեան կտրուկ ու խիստ ընթացքը՝ պատժել յանցաւորին... և աւելի քան ցաւալին այն է, որ սանձ կատաղած «Ջանբեզարների» արիւնառուշտ բնազդներին օրէցօր զոհ են գնում խեղճ, անպաշտպան, չքաւոր գիւղացիներ, որոնք կարիքից սեղմված, արիւնը աչքի առաջ մշակում ու ծեծում են կալ ու կուտը, հաւաքում արտը, հերկում վար ու ցանքը, որ սովալլուկ զաւակներին գոնէ մի կտոր չոր հաց ճարեն... Թագաւորի հարկը վճարեն: Մի երկու շաբաթ առաջ Խաչափարադ, Դիզա, Սիրաբ, Ջամալդին, Սալթախ և այլ գիւղերում պատսպարվող Ջանբեզարների խումբը Նորաշէնի Ջրաղացից քշեց իրանց ալիւրի բեռներով երկու Թշուառ փաղաշցի հայերին ու գազանաբար մորթոտելով հետքերը կորցրեց: Սոյն յուլիսի 30-ին Արազին Թուրքախառն գիւղի կալ ծեծելու տեղից Թոյլ ու անզէն մի հայի քաջ Ջանբեզարները բռնում ու քշում են մօտակայ Ջամալդին գիւղի ձորակը ու չարաչար սպանում:

Յիշեալ խումբը, ինչպէս պատմում են իրազեկ անձինք, բաղկացած է 40—50 հոգի հեծեալ Ջանբեզարներից. դրանք բաժանվում են զանազան խմբակների ու գործում ուրոյն ուրոյն կէտերում. դրանց մասնակցում են նաև քաղաքի մօտակայ Ղարաչուղ, Բուլղան, Ղօշադիզա, Նէհրամ գիւղերից. խմբակի կենտրոնատեղին է Թուրք Խաչափարադ գիւղը, որը պատսպարված ու պաշարված է մի շարք Թուրք գիւղերով: Թուրք ազգաբնակութիւնը անդադար զինվում է, հէնց որ արևը մայր է մտնում, սկսվում է մի եռանդուն շարժում, զէնքերի տեղափոխումն սահմանամօտ գիւղերից դէպի ներքին Թուրք գիւղերը. Թուրք ագիտատօրներ վխտում են գաւառում. Նրանք եռանդուն կերպով զինում են իրանց եղբայրներին, համերաշխութիւն քարոզում դէպի սիւննի մահմեդականները, առաջարկում են գաղթել Պարսկաստան և այդ նպատակով նշանակված են սահմանակից Թէյմուր խանի խանութեան մէջ մի շարք Արաքսի ափին գտնվող Թուրք գիւղեր, որոնց բնակիչներին մտադիր են գաղթեցնել խանութեան խորքերը, իսկ նրանց տեղ բնակեցնել կամաւոր գաղթականներին. հէնց այդ ուղղութեամբ արդէն արված են քայլեր. գաղթել ցանկացողները շտապով ծախում են իրանց ապրանքները, բոլորը վերածելով նաղդ փողի. Թուրք գաղթականների համար որոշված են հետևեալ գիւղերը՝ Ղզըլղալա, Ղամբար-քեանդի, Երմանի-քեանդի, Շըլով, Կուրշալու, Կօշ-քեանդի, Բայրշան, Դէվանխանա, Իլանլի, Նաղիք և այլն. Թուրք գաղթականները մեծ համակրանք են վայելում մահմեդականների կողմից. Նրանք, խուսափելով Ռուսաստանից, կամենում են խոտացնել ու չէնացնել մահմեդական ռէժիմից անապատացած երկիրներ, որտեղ տեսնում են իրանց պարզ, պայծառ ու փայլուն ապագան և մահմեդական աշխարհի երազած յաղթանակները:

Իսկ իրերի այդ տարօրինակ դրութեան մէջ քայքայված և ուժասպառ հայ գիւղացուն շահատակում է նախկին կուլակը, վաշխառուն, կողոպտիչ երեցփոխը, յափշտակիչ տէրտէրը, որոնք ձեռք-ձեռքի տուած ու զինակաւորված կազմակերպութեան քողով անողորմ կերպով բռնանում են վերջինի անհատական ազատ կամքի ու իրաւունքի վրա...

Ա. Տ.-Ստեփաննոսեանց

—

Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը վերջին նիստում գրել է տեսչի պաշտօնի համար պ. Յ. Տէր-Միրաքեանի Թեկնածութիւնը, սակայն վերջինս շտապել է հրաժարվել: Եւ այսպէս մէկ-մէկի ետևից հրաժարվեցին՝ Ահարոնեան, Ս. Տիգրանեան, Պ. Մելիքեան և Տէր-Միրաքեան:

Նոյն նիստում, հոգաբարձութիւնը, տեսնելով որ նախկին ուսուցչական խմբի անդամներից ոչ մին յայտարարութիւն չէ ներկայացրել՝ իր ուսուցչական պաշտօնի շարունակութիւնը խնդրելու համար, նպատակայարմար է գտել փոխել իր որոշումը՝ որով նա պարտադիր չէր համարել իր համար նախկին հոգաբարձութեան վճիռը՝ իր պաշտօնի մէջ պահելու ուսուցչական խումբը, այլ առաջարկել էր խմբի անդամներին նոր յայտարարութիւն տալ, եթէ կամենում են շարունակել իրանց պաշտօնը: Սակայն ուսուցչական խումբը որոշել էր ոչ մի յայտարարութիւն չը ներկայացնել: Այդ պատճառով հոգաբարձութիւնը, ի փոփոխումն իր վճռի, որոշել է իր վերջին նիստում, ամսիս 7-ին, որ ուսուցիչները պարտաւոր չեն յայտարարութիւն տալ, այլ ինքը հոգաբարձութիւնը գլխաւորապէս կը յայտնէ նրանց, թէ նրանք մնում են իրանց պաշտօնում, բացի մի քանիսից, որոնց պաշտօնավարութիւնը անյարմար նկատվելով կը փոխարինվեն նոր խնդրագիր տուողներով, իսկ այդ անյարմար նկատվածներին միայն կը յայտարարվի, թէ նրանք արձակված են:

Չը մտածված, շտապով կատարված վճիռները միշտ հասցնում են այդպիսի հակասական հետևանքների:

ՄԻ ՆՈՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ

«Бирж. Вѣд.» մանրամասնօրէն յայտնում է, թէ ինչպէս ժողովրդ. ազատութեան կուսակցութեան կենտր. կոմիտէտի մէջ միտք է յղացել՝ ի մի ժողովել Պետական Դումայի մասին եղած բոլոր յօդուածները և մի ժողովածու կազմել: Ժողովածուն ստորաբաժանվում է բաժինների, որոնք նուիրված են հարցերի առանձին կաթեգորիաներին, և գլուխների, որ նուիրված են առանձին հարցերին: Օրէնսդրական գործունէութեան բաժնում տրվելու է մի յօդուած՝ Դումայի ընդունած՝ երկու մահվան պատիժը վերացնելու և մատակարարական օրինագծերի մասին: Մահվան պատիժը վերացնելու մասին գրվելիք յօդուածը յանձնված է Նաբօկօվին և նա անելիք է: ենթարկելու այդ հարցի առիթով Պետական Խորհրդում տեղի ունեցած վիճաբանութիւնները: Ապա կը հետևի արդէն Դումա մտցրած օրինագծերի վերաբերեալ յօդուածը: Պր. Շերշենեվիչի ժողովների մասին կազմած օրինագիծը, Վ. Մ. Հէսսէնի՝ մամուլի վերաբերեալ, Կոմինկին՝ դաշնակցութիւնների մասին և Կօկօշկինի՝ քաղաքացիական հաւասարութեան օրինագիծը:

Առայժմ անկախ է մնում այն հարցը թէ՝ ում կը յանձնվի արդեօք ագրար հարցի մասին օրինագիծ կազմելու աշխատանքները: Մտադրվում է մասնակցութեան հրաւիրել պրոֆէսորներ Չուպրովին, Կաուֆմանին և իշխան Պետր Դոլգորուկովին: Այս իսկ օրէնսդրական բաժնում կը մասնակցեն նաև պր. Նովգորոդցևը և ուրիշները: Ապա բաժնի վերջում կը դրվեն այն օրինագծերի բնագրերը, որ չեն մտցրած Դումա, բայց արդէն պատրաստ կան ժողովրդական ազատութեան կուսակցութեան պարլամենտական ֆրակցիայում: Կը լինի նաև մի գլուխ, որ նուիրված է լինելու Դումա մտցրած մինիստրական օրինագծերին:

Երկրորդ բաժինը նուիրված է լինելու Դումայի ներքին կազմակերպիչ գործունէութեան նակազին, մանդատային գործերին, բիւրօին և այլն: Այս բաժնում մօտ մասնակցութիւն կունենայ Ս. Ա. Մուրոմցևը:

3-րդ բաժինը նուիրված կը լինի Դումայի քաղաքական դերի պարզաբանման: Այս բաժնում կը տրվին մի շարք պատմա-քաղաքական բնաւորութիւն կրող յօդուածներ, որոնց մէջ անկողմնապահ կերպով լուսաբանվելու են Դումայի կուսակցական խմբակցութիւնը, կուսակցութիւնների դերը՝ նրանց ներքին յատկութիւնները, ինչպէս և Դումայի գործունէութեան առանձին, աւելի աչքի զարնող մոմենտները:

Դումայի քաղաքական դերի մասին գրելու են Ի. Ի. Պետրունկևիչը, Վ. Մ. Հէսսէնը, իսկ մի առաջնորդող յօդուած այդ բաժնում կը գրէ Պ. Ն. Միլիւկօվը, որը կը տայ Դումայի ծագման պատմութիւնը և նրա նպատակների նկարագիրը: Քաղաքական բաժնում յատուկ մի յօդուած նուիրված է Դումայի գահական ճառին պատասխան ուղերձին: Յանձնված է Պ. Ն. Նաբօկօվին: Այս յօդուածում, ինչպէս և ուրիշ շատերում, կը բացատրվեն շատ և շատ կէտեր, որոնք մինչև այժմ անյայտ են մնացել հասարակութեան լայն խաւերին, Հարցապնդումների ժողովածուի մասին հոգալու է Ի. Վ. Հէսսէնը, որը գրելու է մի յօդուած, որի մէջ լուսաբանվելու է այդ հարցապնդումների դերը և մատնանշվելու են կեանքի այն բոլոր կողմերը, որոնց և վերաբերում են յիշեալ հարցապնդումները: Վերջապէս մէկ կամ երկու յօդուածներ էլ նուիրված կը լինեն Դումայի՝ ամեն տեսակ ըստատիստիկային:

ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Ամեն ոք խորին համակրութեան զգացումով ողջունելով Բագւում կազմակերպված և հաստատված հայոց կուլտուրականմիութեան երևան գալը՝ երջանիկ կըզգայ իրան, տեսնելով հայ հասարակութիւնը անկաշառ և անկեղծ շահագրգռված գործելիս այդ համակրելի և անհրաժեշտ ընկերութեան մէջ, տոգորված «հայ ժողովրդի մտաւոր, բարոյական, ֆիզիքական, տնտեսական և սօցիալական» կացութիւնը բարելաւելու տենչով, ժամանակակից կեանքի ամենաինտենսիվ մոմենտներին, երբ ազգային ինքնորոշման խնդիրն անյապաղ լուծումն է պահանջում, երբ րօպէի հոգեբանութիւնն հասարակութեան ինտելլիգենտ ոյժերի կենտրոնացում և լարումն է հրաւիրում, երբ երկիրն անիշխանականութեան փոթորիկներից ազատելու համար ազգերն իրար հասկանալու, միանալու, ի մի օրգանական ամբողջութիւն ձուլվելու կարիք է զգացվում:

Այսպիսի մի միութիւն հանդէս է գալիս ճիշտ այն ժամանակ, երբ հայ ժողովուրդը Կովկասում իրերի աննպաստ և աննորմալ զուգադրութեան շնորհիւ՝ կարօտ է հայկական այնպիսի հաստատութիւնների, որոնք հնարաւորութիւն ունենային նրա խնդիրները վճռելու, կենսական կարիքներն հոգալու և Թշուառ վիճակից ազատելով՝ լուսամիտ և երջանիկ շաւղով առաջնորդելու:

Պատկանելով հասարակութեան ամենաօրգանական տարրը կազմող ուսանողութեան, հրաւիրում եմ Ռուսաստանի բոլոր հայ ընկեր ուսանողներին՝ առանց քաղաքական դաւանանքի խտրութեան՝ կազմակերպել «Ռուսահայ ուսանողական միութիւն», որ անմիջական աշխատակից մարմին լինէր վերոյիշեալ կուլտուրական միութիւնների շրջանում, որոնք, պէտք է յուսալ, կը բազմանան Կովկասում, քանի որ կարիք է զգացվում, որով մենք, ուսանողներս, շաղկապված ենք մեր ժողովրդի հետ, մենք չենք կարող չը հրաւիրվել գործակցելու, քանի որ այդ միութիւնների գծագրած նպատակներն ընդգրկում են ժողովրդի բոլոր խաւերի շահերը, սկսած աղքատ և Թշուառ գիւղացու հողային հարցերը բարելաւելուց մինչև երիտասարդ ինտելլիգենտ ոյժերի կատարելագործումը: Բացի այն, որ կը հաստատվէին սերտ կապ և կանոնաւոր յարաբերութիւններ հայ հասարակութեան և ուսանողութեան միջև, այսպիսով, անկասկած, բաւականաչափ կը բարւոքվէր հայ ուսանողի վիճակը, միջոց կը հանդիսանար ճանաչել մի հաւաքական ուսանողական մարմին, կազմակերպված ինտելլիգենտ ոյժերից, որոնք պատրաստվում են ոչ հեռաւոր ապագայում կոչվելու հասարակութեան անդամ և հետևապէս իրանց տրամադրութեան տակ վերցնելու ժողովրդի ղեկը, որպէս հասունացած քաղաքացիներ:

Ցանկալի էր, որ մեր ուսանողութիւնը, ան կախ քաղաքական սկզբունքներից, միացած գործէր մի ընդհանուր դրօշակի տակ, «կուլտուրա» տարածելու Կովկասի հայ ժողովրդի մէջ: Մինչ այժմ, մենք, ուսանողներս, համերաշխ գործունէութեան անհրաժեշտութիւնը չենք գիտակցել, գոնէ մեծամասնութիւնը: Մենք ունեցել ենք կազմակերպութիւններ մայրաքաղաքներում ու միւս համալսարանական քաղաքներում, ունեցել ենք կանոնադրութիւններ, նախագահներ, քարտուղարներ, ընդհանուր ու մասնաւոր ժողովներ և այլն: Այս փաստի իրողութիւնը կը վկայէ մեզանից ամեն մէկը: Բայց մեր գաղափարները չեն իրականացել գործնական կեանքում, որովհետև ամենուրեք բացակայել է բարոյական կապը, և ուսանողները միացած են եղել միմիայն «ողորմելի» ֆօնդերով, իսկ գործակցութեան խնդիրներն ասպարէզ են եկել միմիայն դրամագլուխը շահագործելու եղանակը անօրինելիս: Խաղաղ գործունէութիւն չէ եղել, այլ անդադար կուսակցական պայքար. կարելի է յիշել դէպքեր, երբ ժողովները ցրվել են հայրենիքների, ապտակների, շվոցների ու սպառնալիքների աղմուկներով:

Ուշադրութիւն դէպի ազգային հասարակական կեանքը, հետաքրքրութիւն՝ դէպի ազգային առաջադիմութիւնը, լեզուն, դպրոցը, գրականութիւնը, գեղարուեստը, երաժշտութիւնը՝ մեզ համար խորթ զգացմունքներ են եղել: Ի հարկէ՝ եղել են անհատներ ու կան, որոնց կարելի է մատնացոյց անել, որպէս բացառութիւնների, որոնք աշխատել են մարմնացնել գործնական կեանքում դաւանած սկզբունքները, լինեն նրանք ազգային, թէ սոցիալիստական՝ այդ միեւնոյն է ու հաւասար գնահատելի: Սակայն դրանք անհատներ են: Իսկ մեծամասնութիւնը ողորմելի սերունդ է, անտարբեր ու անընդունակ որեւէ հասարակական գործունէութեան:

Յաճախ կը լսէք այսպիսի կարծիք՝ երբ հայ ժողովուրդը զուրկ է ազգային հաստատութիւններից, ապա ուրեմն չը կայ հասարակական ասպարէզ արդիւնալից գործունէութեան համար: Արդարանալու սոյնանման խեղճ ու թիւր միջոցներից երեւում է այդպիսիների մտաւոր ողորմելիութիւնը, որոնք ասպարէզ չեն գտնում իրանց եռանդն ու գիտութիւնը գործադրելու:

Մինչեւ տառապեալ ժողովուրդը տարիների ընթացքում խարխափում է մտաւոր ըստրկութեան և խաւարի ցանցերում, օգնութեան է հրաւիրում իր փայփայած սաներին: Մի՞թէ այս ասպարէզ չէ հայրենասիրական եռանդն արտայայտելու:

Այժմ մենք ունենք դպրոցներ, մամուլ, բարեգործական ընկերութիւններ, կուլտուրական միութիւններ, պատգամաւորական ժողովներ, ուսուցչական համագումարներ և այլն:

Հետեւապէս՝ հասարակական հաստատութիւններ ու հասարակական կեանք:

Այժմ մենք կառուցանում ենք մի հասարակական շէնք, որը անխախտ և կանգուն պահպանելու համար անհրաժեշտ են ամուր սիւներ և ամուր պարիսպներ: Անհրաժեշտ են ինտելլիգենտ, կրթուած, պատրաստուած և առաքինի գործիչներ, որոնք պէտք է ծաղկեցնեն մեր կեանքի բոլոր երեսները, պատուաստելով հայ ժողովրդին այն լուսամիտ գաղափարները, որոնք առաջնորդում են կենցաղակիրթ ազգերին: Անհրաժեշտ են պատրաստուած կանոնիկ ոյժեր, որոնք պէտք է շարժեն, մշակեն և ուղղութիւն տան առաջադիմական սկզբունքներին ժողովրդի բոլոր խաւերում, և որ գլխաւորն է՝ կուլտուրայի ճառագայթներով լուսաւորեն հայ գիւղացու և բանւորի խրճիթը:

Անհրաժեշտ չէ այստեղ հրաշագործութիւն, և հայ ուսանողի դերն անգին է: Նա ունի հնարաւորութիւն արդարացնելու այն յոյսերը, որ դնում է նրա վրա հասարակութիւնը: Բաւ է միայն կամենալ:

Կամենալը կարողանալ է:

Իսկ ինչ կերպ և ինչ եղանակներով պիտի արտայայտուի նրա գործակցութեան շրջանը, այդ կարող է որոշել ուսանողական համագումարը, որտեղ կը քննուին և կը հաստատուին միութեան համար կանոնադրութիւն և միջոցներ՝ գործելու: Միութիւնը կարող է ունենալ իր պարբերական օրգանը, որտեղ կը հրաւիրուին աշխատակցելու բոլոր ցանկացողները: Իսկ երբ կորոշուի Ռուսաստանի հայ ուսանողութեան կոլլեկտիվ ֆիզիոնոմիան, դժուար չի լինի կապ հաստատել արտասահմանեան հայ ուսանողութեան հետ եւս:

Իսկ այժմ՝ կրկին շնորհաւորելով Բագուի հայոց կուլտուրական միութեան երեւան գալը և քաջայոյս, որ նա կը ներդաշնակէ իր ծրագրած նպատակներն ընթացիկ կեանքի բացառիկ ժամանակի հոգեբանութեան հետ, ցանկութիւն ենք յայտնում, որ միւս հայաբնակ նահանգական քաղաքներում եւս հիմնարկուին այդպիսի միութիւններ, քանի որ դրանք ժողովրդական օրինաւոր պահանջներ են:

Ինչ վերաբերում է ուսանողական միութեան, յոյս ենք տածում, որ ուսանողները կը միանան մեր առաջարկած ծրագիրներին՝ յանուն ժողովրդական լուսաւորութեան կազմակերպել հայ ուսանողական միութիւն, հայ ուսանողութեան մեծամասնութիւնը քրոնիքական նինջից սթափեցնելու և ջնջելու նրա հեւանդոտ երկրպագումը իր անհատական էմպիրեք «ես»-ին, ապրելու հասարակական ընազդով:

Ուսան. Յովակ Ղուկասեան
Rauhalahti (Ֆինլանդիա)

ԲԱԳՈՒԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հայ մամուլը մի առանձին ուշադրութեամբ հետեւում էր ազգային անդրանիկ ընտրութիւններին, որովհետեւ հայ իրականութիւնը սրանով թեւակոխում է մի նոր պատմական շրջան: Նկարագրելով այն օգապատը, այն բոլոր նպաստաւոր ու աննպաստ պայմանները, որտեղ կատարվում էին ազգային ընտրութիւնները, հայ մամուլը արձանագրում էր իր էջերում և այն զեղծումներն, անկանոնութիւններն և բռնութիւնները, որոնք տեղի էին ունենում ընտրութիւնների շուրջը: Զանազան ընտրողական շրջաններից հայ լրագրութեան էին հասնում ընտրութիւններին վերաբերեալ տեղեկութիւններ, թեր ու դէմ կարծիքներ: Հայ լրագրութիւնն իր խորհրդակցութիւնների նիւթ էր շինում այդ բոլորը, լուսաբանում խնդիրն ու իր եզրակացութիւնները հանում:

Բագուն միայն բացառութիւն էր կազմում: «Doux pays!»—կասէին իրերի դրութեան անծանօթ քաղաքացիները: Սիրուն, խաղաղ երկիր է, որտեղ քաղաքացիները այնքան են ընտելացել պարլամենտական կեանքին և ընտրողական աւանդութիւններին, որ ամեն բան կատարվում է առանց աղմկի, հայհոյանքի, տուր ու դմբոցի, որից, պիտի խոստովանել, ազատ չէ հայ իրականութիւնը: Սակայն պիտի դժբախտաբար նկատենք, որ Բագուի պատուիրակների ընտրութիւններն եկան հաստատելու մի աւելորդ անգամ եւս Բագուի հայ հասարակութեան մի մասի քաղաքական տհասութիւնը, անպատասխանատուութիւնը, անգիտակցութիւնը և թեթեւամտութիւնը մի կողմից և այն ողջամիտ վերաբերումը դէպի ժողովրդի իրաւունքները, որ ցոյց տուեց ժողովրդական ընտրողական սուրբ գործը վարող մարմինը (հոգևոր), միւս կողմից: Մենք օր առաջ որոշել էինք չը բողոքել և ոչ էլ լրագրութեան նիւթ դարձնել այն բոլոր խայտառակութիւնները, որոնք կատարվել են ընտրութիւնների շուրջը, որովհետեւ հայ իրականութիւնը ստեղծել է մի այնպիսի մթնոլորտ, որտեղ ամենասուրբ սկզբունքներն և գաղափարներն անգամ խեղդվում են բաշիբօզուկութեան ճանկերում և ամենաբարդ հասարակական խնդիրները լուծվում խանչալի ծայրով: Մեզ դեռ շատ ժամանակ հարկաւոր է, մենք դեռ պիտի ըսպառենք մեծ էներգիա և գործադրենք մեծ աշխատանք և ջանք, որպէս զի մաքրվի հայ մթնոլորտը «ազգային սխտերից» և սոցիալական կատեգորիաները կարողանան մտնել նորմալ պայմանների մէջ և ստանձել այն միսիան, որի իրագործման համար ինքը պատմութիւնը տիրաբար հրաւիրում է նրանց: Ազգային զինւորական շտաբի տեղական ճիւղը, որը աշխատում է ազգային զէնքի միջոցով ազգային կեանքի բոլոր ֆունկցիաները գրաւել, չը լռեց: Շտաբի զինւոր-թղթակիցը, հպարտութեամբ յայտարարելով հայ ժողովրդին («Ալիք»-ի մէջ, № 73, Պ-եանց) Դաշնակցութեան յաղթանակը, չէ զլացել դաշնակցական ցեխոտ տոպրակից մի քանի կեղտոտութիւններ շպրտել նաեւ Սօցիալ-Դեմօկրատիական Բանւորական Հայ Կազմակերպութեան հասցէին:

Թողնելով մի կողմ այն բաշիբօզուկութիւնները, բռնութիւնները և ճնշումները, որ ազգային միլիցիօներները գործադրում էին անգիտակից և վախկոտ մասսաների վրա ընտրութիւնների ժամանակ (դա մի ընդհանուր երեւոյթ է, որի մասին ամեն օր գրում-խօսում են, և կարիք չը կայ մի աւելորդ անգամ եւս կրկնելու), ես կը ցանկանայի հայ հասարակութեան առաջ դնել միմիայն իրաւական կողմը:

Բոլոր մասնաւոր ժողովներում (Զաւէն վարդապետի մօտ), ընտրութիւններից առաջ և ընտրութիւններից յետոյ, ես շեշտել եմ այն անտարբեր վերաբերումը, որ ցոյց էր տալիս վարդապետը դէպի քաղաքացիների իրաւունքները, և այն հանգամանքը, որ նա ինչ որ մութ ոյժերի ազդեցութեան տակ չը կարողացաւ ընդունել այնպիսի ընտրողական սիստեմ, որը հնարաւորութեան սահմաններում ապահովէր քաղաքացիների իրաւունքներն և պաշտպանէր ընտրողական սկզբունքը: Այդ բողոքներն առիթ են տուել «Ալիք»-ի թղթակցին կարծելու, որ Ս.-Դ. Բ. Հայ Կազմակերպութեան Բագուի կոմիտէն բլոկ է կազմել բուրժուա կղերական էլեմենտների հետ, որովհետեւ վերջիններս, նկատելով մի շարք զեղծումներ, մտադրութիւն են ունեցել բողոքելու հոգևոր վարչութեան:

Յայտնի է, որ ամբողջ Բագուն և բանւորական արուարձաններն ունին միայն մի եկեղեցի և հետեւապէս 35—40 հազար հայ ժողովուրդը կոնդակների համաձայն պիտի ունենար մի ընդհանուր ծխական ժողով, որտեղ պիտի ընտրուէին 35 պատուիրակները: Հասկանալի է, որ այն ընտրողական սիստեմը, որ գործադրվում է Թիֆլիս և այլ քաղաքներում, միանգամայն անյարմար է և անգործադրելի Բագուի համար: Զաւէն վարդապետը, որին յանձնված էր այդ գործը, չէր կարողանում լուծել խնդիրը, տատանվում էր և չէր վստահանում իր վրա վերցնել գործի պատասխանատուութիւնը: Մի քանի անգամ իր մօտ հրաւիրեց խորհրդակցելու ընտրութիւնների մասին տեղիս ծխական դպրոցների հոգաբարձութեան անդամներին, քահանաներին և մի շարք քաղաքացիների (վերջիններիս թւում և ինձ): Բոլոր քաղաքացիները, միանգամայն հակառակ լինելով ընդհանուր ծխական ժողովին, գտնելով այդ ձեւն անգործնական Բագուի համար, առաջարկեցին մի շարք սիստեմներ, որոնք չանցան: Ես էլ առաջարկեցի կազմել քաղաքացիներից մի ընտրողական մասնաժողով, որը Զաւէն վարդապետի նախագահութեամբ պիտի ցուցակագրէր օր առաջ բոլոր ընտրող քաղաքացիներին, ստուգէր ընտրողների ստորագրութիւններն և տարիքը, բաժանէր Նաւթային րայօնը ընտրողական թաղերի և նշանակէր երկու-երկու հոգի ընտրողական դահլիճներում տուփերին հսկելու համար: Նշանակած օրը ցուցակագրված քաղաքացիները կը գնային պատուիրակներին ընտրելու: Այս առաջարկն էլ չանցաւ: Առհասարակ բոլոր խորհուրդներն և առաջարկները որեւէ դրական հետեւանք չունեցան: Միակ լիազօրը Զաւէն վարդապետն էր: Վերջապէս Զաւէն վարդապետը երկար տատանելուց յետոյ բաժանում է Նաւթային րայօնը 15—16 ընտրողական թաղերի և առանց նախօրօք ընտրողների ցուցակը կազմելու նշանակում է մի առանձին ծանուցումով կիրակի, յուլիսի 16-ին (առաւօտեան ժամը 9-ից մինչեւ երեկոյեան ժամը 8-ը) միօրեայ ընտրութիւններ բոլոր ընտրողական թաղերում: Պիտի նկատել, որ 35—40 հազար ժողովրդի $4/5$-ը ծխական չէ գրված: Ընտրութիւնների նախընթաց օրը քահանաները բոյկոտ են յայտարարում: Մի մասը (Եղիշէ քահ. Գեղամեան) գտնում է վարդապետի սիստեմը հակառակ կոնդակների ոգուն (տես «Баку»), միւս մասն առարկում է, որ ընտրութիւնների օրը պսակադրութիւն ունի և առհասարակ հարսանիքը գերադասվում է ընտրութիւններից (վկայ են Տ. Բէկզադեան և ուրիշներ): Քաղաքացիների մի մասը հրաժարվում է տուփերը հսկել և արձանագրել ընտրողների անունները և տարիքը: Ինձ էլ յանձնված էին Բիբի-Հէյբաթի ընտրողական շրջանի տուփերը: Ես էլ հրաժարվեցի, երբ իմացայ, որ Ս.-Դ. Բ. Հայ Կազմ. տեղական կոմիտէն ինձ նշանակել է իր թեկնածուների շարքում: Իմ կարծիքով, մի կազմակերպութեան անդամ-թեկնածու պատուիրակը բարոյապէս իրաւունք չունի հսկելու ընտրողական տուփը և արձանագրելու ընտրողներին, բայց դաշնակցական զինւորներն և Զաւէն վարդապետը չէին կարողանում ըմբռնել այս տարրական հասկացողութիւնը: Վերջինս դեռ աշխատում էր ինձ համոզել հակառակը (վկայ՝ հոգաբարձութեան անդամներից շատերը): Այդպիսով տուփերի մեծ մասն ընկաւ դաշնակցականների ձեռքը: Ընտրութիւնները վերջացան էն: Երկու օր անց քաղաքացիները դարձեալ հաւաքվում են վարդապետի մօտ տուփերը բացելու: Ես առաջարկում եմ նախ քան տուփերը բացելը և թերթիկները կարդալը արձանագրել այն անկանոնութիւններն և զեղծումները, որոնք կատարվել են ընտրութիւնների ժամանակ: Կարծեմ այս համեստ առաջարկն անպատուութիւն չէր ազգային զինւորների համար և ոչ էլ որեւէ սադրանքութիւն Դաշնակցութեան դէմ, նամանաւանդ որ զինւորները դեռ չը գիտէին ինչ անկանոնութիւնների մասին պիտի խօսէի: Վերջիններս սկսեցին աղմուկ բարձրացնել, գոռալ՝ «արձանագրութիւններ չը պիտի լինեն, ժողովուրդը սպասում է միայն ընտրութիւնների հետեւանքին»:

Վերջապէս ինձ աջողվում է արձանագրել տալ մի շարք անկանոնութիւններ, հիմնելով իմ նկատողութիւնները ժամրայն խնդրի իրաւական կողմի վրա, աչքի առաջ ունենալով քաղաքացիների իրաւունքները և ընտրողական սկզբունքի անուշադրութիւնը, առանց շօշափելու այն բաշիբօզուկային - անիշխանական դրութիւնը, որ ստեղծել էին ազգային զինւորները ընտրութիւնների ժամանակ (վկ. Զաւէն վարդապետ, Ան. Քալանթար, Եաղուբեան, Տէր-Ղազարեան, Ս. Նազարեան, Վարշամեան և այլն), դրութիւն, որի դէմ բողոքում էր բուրժուազիան և ինտելլիգենցիայի մի մասը, ոչ թէ հայ սօցիալ-դեմօկրատները, որոնք երբեք չեն բողոքել:

Ահաւասիկ այն անկանոնութիւնները, որոնք կատարվել են ընտրութիւնների ժամանակ.

1) Ընտրութիւնների նշանակած ժամանակից 22 ժամ առաջ Զաւէն վարդապետը յանկարծ իրան թոյլ է տալիս յայտարարելու և յայտնելու բազմաթիւ քաղաքացիների, որոնք ընտրողական պայքար էին մղում ժողովրդի մէջ իրանց թեկնածուների օգտին, որ ընտրութիւնները յետաձգվում են անորոշ ժամանակով: Յետաձգման մասին հաղորդում են նաեւ Բալախանու բանւորութեան (Միրզոյեան և այլն): Տպագրել էին այդ կարճ ժամանակամիջոցում և թռուցիկներ, բայց չէին ցրել: Շաբաթ երեկոյեան միայն, ընտրութիւններից 13 ժամ առաջ, վարդապետը contre-յայտարարութիւն է տալիս (վկ. Արշակ Թեհեան, Տէր-Ղազարեան, Զաւէն վարդապետ և ուրիշներ):

2) Ծանուցման համաձայն տուփերը պիտի բացվէին միաժամանակ առաւօտեան ժամը 9-ին և փակվէին երեկոյեան ժամը 8 ին բոլոր ընտրողական թաղերում: Մեսրոպ քահանայ Տէր Ոսկանեան հասնում է Բալախանու կայարանը իր 6 տուփերով ժամը 9½-ին և որովհետեւ ընտրողական դահլիճները գտնվում են մէկը միւսից մի քանի վերստ հեռաւորութեան վրա, տուփերը բացվում են ժամը 10-ին, 11-ին և այլն, և վերջին տուփը հասնում է Միրզոյեանի նաւթահանքը կէսօրից յետոյ: Ես այնտեղից հեռացայ ժամը 11-ին, երբ դեռ տուփը չէր եկել և հարեան նաւթահանքերից եկած բանւորներից (Կովկասեան ընկ. և այլն) շատերը, տուփը չը գտնելով նշանակած տեղում, գնում էին իրանց ժամանակին:

3) Նոյն քահանան բոլոր տուփերը յանձնում է պատահական մարդկանց ըստ իր հայեցողութեան, որովհետեւ ընտրողական դահլիճներում չէ գտնում այն անձնաւորութիւններին, որոնց անունները միայն նշանակել էր իր գրքոյկի մէջ Զաւէն վարդապետը, բայց մոռացել էր յայտնել այդ քաղաքացիներին նրանց ինչ անելիքի համար:

4) Նոյն քահանան չորրորդ ընտրողական թաղին (Մանթաշեանի և հարեան նաւթահանքեր) յատկացրած տուփը տալիս է Մանթաշեանի կառավարչին և խնդրում է պահել այդ տուփը իր մօտ և սկսել ընտրութիւնները հետեւեալ երկուշաբթի օրը: Նա իր այս տղայամիտ քայլը բացատրում է այն հանգամանքով, որ օրը կիրակի էր և բանւորները կարող էին ցրված լինել (այդ հոգևորականը, կարծես, Չինաստանից էր եկել, չէր կարդացել ծանուցումները և լսել ընտրողական հարայ-հրոցը և պատրաստութիւնները): Պատահմամբ մտնում եմ Մանթաշեանի գործարանը, և այդտեղ հաղորդեցին ինձ այդ կլասիք կարգադրութեան մասին: Ես մի քանի բանւորների և ծառայողների բացատրում եմ, որ ընտրութիւնները միօրեայ են, և ոչ ոք իրաւունք չունի յետաձգելու: Բանւորները յուզվում են և խնդրում են ինձ կարգադրել տուփը բաց անել (վկ. ինժ. Տէր-Մկրտչեան, Բարսեղ և ուրիշներ): Մինչ այս մինչ այն Մեսրոպ քահանան վերադառնում է քաղաք, այստեղ-այնտեղ թողնելով ազգային տուփերը, և յայտնում Զաւէն վարդապետին իր քաջագործութիւնը: «Հոգ չէ, ասացի ես բանւորներին, կարող էք վաղը սկսել ընտրութիւնները»,—աւելացնում է քահանան իր զեկուցման մէջ: «Հոգ չէ»,—կրկնում է Զաւէն վարդապետը և ժամը 5-ին հեռախօսով խնդրում է առաջին պատահած մարդուն տուփը դնել մի անկիւնում և թերթիկները գցել մէջը (վկ. Զաւէն վարդապետ, Մեսրոպ քահանայ, բանւորներ, ծառայողներ): Սակայն սրանով վերջանում խեղճ տուփի ոդիսականը:

5) Ժամը 6-ին ազգային տասնապետը, տուփի միսիան վերջացած համարելով և իր ստորադրեալ զինւորների շղթային կապելով ազգային տուփը, տանում է ընտրողական դահլիճից 5-ի գրուպպան, որտեղից մի խումբ ազգային զինւորներ, քաղաքացիներ և քաղաքացուհիներ հեռախօսով յայտնել են տուփը հսկողին, որ նրանք անհրաժեշտութիւն չեն գտնում գնալու ընտրողական դահլիճը, այլ ցանկանում են, որ տուփը տանեն նրանց մօտ (վկ. Տէր-Մկրտչեան, Աղ. Թադէոսեան, Ս. Նազարեան, Տէր-Ղազարեան): Երբ ես նկատեցի, որ ընտրողական սկզբունքը և քաղաքացիների ամենասուրբ իրաւունքները խաղալիք են դարձրել, Զաւէն վարդապետը բացականչեց՝ «Պ. Իւզբաշեան, ես ձեզ չեմ հասկանում. միթէ դա յանցանք է. չէ՞ որ տուփն իմն է. որտեղ ուզեմ, այնտեղ էլ կը դնեմ» (վկ. Զաւէն վարդապետ և ժողովականներ):

6) Բալախանում տուփերը (բացի մէկից) և Երմէնի-քենդի տուփը, գիշերելով զանազան տեղերում, հասել են քաղաքը հետեւեալ օրը ժամը 11—12-ին:

7) Բալախանկի շրջանէի ընտրողական թաղի տուփը բերել են վարդապետի մօտ ժամը 6-ին (կիրակի), այսինքն ընտրողական դահլիճը փակվել է նշանակված ժամանակից երկու ժամ առաջ (վկ. Արամ Առաքելեան և ուրիշներ): Որպէս զի ընթերցողը լաւ ըմբռնէ, որ տուփերի մօտ նստած քաղաքացիներից շատերն անգամ չէին հասկանում իրանց դերը և չէին համապատասխանում իրանց կոչմանը, բերում եմ, որպէս իլլիւստրացիա, հետեւեալ կուրիօզը: Դեռ ժամը 4-ը չը լրացած, զանազան տեղերից (ընտրողական դահլիճներից) հեռախօսով յայտնում են վարդապետին՝ «Տուփն արդէն պատրաստ է, բերէ՛նք»:

8) Ընտրութիւններն այնպիսի պայմանների մէջ են կատարվել, որ միեւնոյն անձնաւորութիւնը կարող էր զանազան ազգանունների տակ ձայն տալ բոլոր ընտրողական դահլիճներում: Նկատվել են նման դէպքեր (վկ. Ան. Քալանթար և ուրիշներ):

9) Որովհետեւ հնարաւորութիւն չը կար տարիքը ստուգելու այն րօպէին, երբ քաղաքացին մօտենում էր տուփին. (նոր անչափահասներ օգտվել են դրութիւնից):

10) Բոլոր պարսկահայերը ձայն են տուել (վկ. Ան. Քալանթար և ուրիշներ):

11) Բոլոր տաճկահայերը նոյնպէս ձայն են տուել (վկ. դաշնակցականներ):

Կոնդակների համաձայն միայն ռուսահայերը իրաւունք ունին ընտրելու և ընտրվելու:

12) Ընտրութիւնները գաղտնի չեն եղել, այլ «բաշիբօզուկային» (վկ. Բագուի հայ հասարակութիւնը):

Ահա իմ նկատողութիւնները, որոնց արձանագրեց ժողովի քարտուղար Տէր-Ղազարեանն և իմ առաջարկութիւնները յանձնվեցին Զաւէն վարդապետին: Այս նկատողութիւններն արել եմ տուփերը բացվելուց առաջ և հետեւապէս ընտրութիւնների «անցանկալի» հետեւանքը չէր կարող ազդել ինձ կամ ուրիշների վրա, ինչպէս գրում է «Ալիքի» զինւոր-թղթակիցը: Այս նկատողութիւնները արձանագրել տալուց յետոյ, ես յայտնեցի ժողովին, որ ես անձնապէս և իմ ընկերները (հայ սօց.-դեմօկրատ.) միանգամայն հակառակ ենք բեկման և երկրորդ անգամ ընտրութիւններին չենք մասնակցելու (վկ. Քալանթար, Զաւէն վարդապետ, Ս. Նազարեան, Վարշամեան, Եաղուբեան և այլն և այլն): Այդտեղ մի դաշնակցական միայն միամտաբար բացականչեց՝ «Չէ՞ որ այդ նկատողութիւնները կարող են բեկանել տալ ընտրութիւնները»: «Դա ձեր գործն է»—նկատեցի ես և հեռացայ դահլիճից: Այնուհետեւ դաշնակցականները բացել են տուփերը և հաշւել թերթիկները: Ո՞րտեղից է եզրակացրել զինւոր-թղթակիցը, որ հայ սօց.-դեմ.-ը բլոկ են կազմել բուրժուա-կղերականների հետ ընտրութիւնները բեկանելու համար (թէեւ ընտրողական սկզբունքի անորդարութիւնը պաշտպանելու համար կարող են, իմ կարծիքով, միանալ զանազան սօցիալական կատեգորիաներ): Սուտը, կեղծը ձեր մշտական բարեկամներ-ուղեկիցներն են: Ե՞րբ պէտք է վերջապէս ճշմարտութեան երեսին նայէք:

Եթէ սրա վրա աւելացնենք ազգային զինւորների գործողութիւնները, որոնց մասին մի խօսք անգամ չեմ ասել ժողովներում արձանագրութիւնները կազմելու ժամանակ, այն ժամանակ կատարեալ կը լինի պատկերը:

Զաւէն վարդապետը դեռ յանդգնում է (թո՛ղ ներվի ինձ այս խօսքը) մի պաշտօնական յայտարարութեան մէջ, որով յայտնում է Բագուի հայ հասարակութեան ընտրութիւնների հետեւանքը, գրել տղայաբար. «Այս մասին (ընտրութիւնների) եղած թեր ու դէմ առարկութիւնները բարի ցանկութեան հետեւանք չեն»: Մի յայտարարութեան տակ այս տողերը գրողը կամ innocent է, ինչպէս ֆրանսիացիք են ասում, կամ քաղաքացիներին կռուի է հրաւիրում: Թո՛ղ «Ալիքի» թղթակիցը գոհ մնայ իր դաշնակիցներից, խունկ ծխէ նրանց և այլ ես չը խօսէ ուրիշ բլոկի մասին: Որտե՞ղ են այն բուրժուաները, որոնց հետ մենք բլոկ ենք կազմել: Բարեհաճեցէք նրանց անունները տալ, հակառակ դէպքում մենք ձեր անունը կը տանք:

Մի՞թէ մոռացել էք, որ միայն դաշնակցական ագլոմերատը ունի օրգանական-հոգեկան-ֆինանսական կապ բուրժուա-կղերական էլէմենտների հետ, և այդ affinité-ն (ազգակցութիւն) այնքան զօրեղ է, որ նոյն իսկ ձեր պատուիրակը, փոխանակ իր ընկեր-թեկնածուներին ձայն տալու, հին սովորութիւնների համաձայն տուփի մէջ է գցել «բնազդմամբ» բուրժուա-կղերական բիւլլետէնը: Դուք, դաշնակցական զինւորներ, եթէ յարգում էք ընտրողական սկզբունքը, պիտի բողոքէիք և բեկանէիք ընտրութիւնները: Եթէ դուք համոզված էք, որ ժողովուրդը ձեզ է միայն հետեւում և միշտ ձեզ հետ է, նա ձեզ հետ կը լինէր և երկրորդ և երրորդ անգամ: Մենք չէինք ցանկանում բեկանել և որոշել էինք երկրորդ անգամ չը մասնակցել: Շատ քաղաքացիներ ցաւում էին, որ մասնակցել են այդ ճահճի մէջ կատարված ընտրութիւններին և նոյնպէս չէին մասնակցել միւս անգամ: Այն ժամանակ ասպարէզը ձեզ կը մնար և յաղթանակը կատարեալ կը լինէր: Սակայն չը նայած ձեր զինւորների ջանքերին ձեր «հեղինակութիւնը» ընկնում է և հեռու չէ այն մոմենտը, երբ այդ արհեստական ագլոմերատը կը փլվի և ոստիկանական միջոցներով միացած խայտաբղետ էլեմենտները կը բաժանվեն միմեանցից և կընկնեն այն կազմակերպութիւնների շարքերը, որոնք համամարդկային, աննզարտ գաղափարների հետ միասին խարսխվում են հայ իրականութեան մէջ գոյութիւն ունեցող սօցիալական կատեգորիաների վրա:

Յ. Բէկնազար-Իւզբաշեան

Բագու, 4 օգոստոսի

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Շամախի, 5 օգոստոսի

«Ընդհանուր, հաւասար և ժողովրդական ընտրութեան ամեն մի 21 տարեկան իրաւունք ունի ընտրելու և ընտրվելու»—ասում է կաթողիկոսական կոնդակը...

Բայց... դժբաղդաբար իրականութիւնը այլ է ասում...

Մի խումբ հայրենի ռազմիկներ, ընկած գիւղերը, ամեն մի սրբութիւն, ընտրողական իրաւունք, դասակարգային շահեր ոտքի տակն են տալիս իրանց նենգ, ստոր նպատակներին հասնելու համար:

Օգտվելով մեր դժբաղդ ժողովրդի սառը վերաբերմունքից դէպի այդ այժմ ոչ ցանկալի ընտրութիւնները, այս արեան, հրի ու սրի տարում շահագործում են նրա դարաւոր սրբութիւնները: Ընկած գիւղէ գիւղ, այսօր այս գիւղում, վաղը՝ միւս, երրորդ օրը՝ երրորդ գիւղում, ընտրութիւններ են կատարում յանուն ժողովրդի...

Դաշնակցական ռազմիկներից ամեն մէկը ամեն մի գիւղում և ընտրող է և ընտրվող... գոնէ մեր գաւառում այդ ձեւով են վերջացել ընտրութիւնները...

Ի լրումն այդ ամենի, Բագուի կենտ. կոմիտէն էլ սրբագործում է դրանց գործած ապօրէն յանցանքները հեռագիրներով և առանձին Մինասների այցելութեամբ, առաջարկում է իր թեկնածուներին և խիստ պատուիրում, որ ինչ միջոցով էլ որ լինի անցկացնեն դրանց թեկնածութիւնը...

Այդպէս էլ եղաւ. անցեալ յուլիսի 30—31-ին նշանակված էր պատգամաւորական ընտրութիւն. այդպիսի մի ոյժով ընտրվեց ամենքիս համար անծանօթ ոմն Յ. Քաջազնունի Էջմիածնի կենտրոնական Ժողովի համար իբրեւ պատգամաւոր, այն ինչ մենք ունէինք թեկնածուներ շամախեցի ամենքիս լաւ ծանօթ Ն. Աբելեան և ուրիշներ:

Չը մոռանամ յիշել, որ այդ ընտրութիւններին, գոնէ մեր գաւառում, ոչ մի իրաւունքի տէր մարդ թէ կին չէ մասնակցել բացի տանը ընկած պարապ ծերունիներից, որոնք դարձեալ չեն մասնակցել, թէեւ ներկայ են եղել...

Իսկ ինչ վերաբերում է զանազան տեսակ ռազմիկներին, դրանք գաւառիս բոլոր եկեղեցիներում իբրեւ ծխականներ մասնակցել են ընտրութիւններին...

Մեր գաւառի թէ պատուիրակները և թէ պատգամաւորները եղել են ընտրված բացառապէս դաշնակցական զինւորներ: Ահա ձեզ ազատութիւն... ընտրողական իրաւունքների հաւասարութիւն...

Շիր-Վան

ԵՐԵՐՈՒՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ոչինչ այնպէս վատ ու յուսահատական չէ, քան լինել մի այնպիսի մարդու դրութեան մէջ, որը դեռ օրօրոցից աղայութեան մէջ է մեծացել, իր ամբողջ կեանքում հրամաններ է արձակել, միշտ իր հրամանները լսող ու կատարող հլու հպատակ ստրուկներ է տեսել, շարունակ իր խօսքն ու կարգադրութիւնները ճշտութեամբ են կատարվել, և յանկարծ, մի գեղեցիկ օր, այդ բնակալ հրամայող աղան տեսնում է, որ իր խօսքերն ու հրամանները այլ եւս կորցրել են իրանց նախկին նշանակութիւնը, որ իր կարգադրութիւնները այլ եւս չեն կատարվում նոյնութեամբ, և ինքը ստիպված է, իր նախկին աղայական պրեստիժը պահպանելու համար, այնպէս ձեւանալ, թէ ինքը չէ նկատում շուրջ կատարված փոփոխութիւնները, թէ ինքը դեռ առաջվան հրամայող աղայի դիրքի մէջ է գտնվում, բայց և միեւնոյն ժամանակ հարկադրված է իր կարգադրութիւններն ու հրամանները օր օրի վրա փոփոխութիւնների ենթարկել, երեկվան կարգադրութիւնը այսօր ջնջել, այսօրվանը վաղը հերքել, միայն թէ չը խոստովանվի, թէ ինքը այլ եւս կորցրել է իր աղայական նշանակութիւնը ու բոլորովին դադարել է իրերի տէրը լինելուց:

Ճիշտ այդպիսի մի աղայի դրութեան մէջ է գտնվում մեր բիւրօկրատիան ու իր ներկայացուցիչ կառավարութիւնը: Նա այլ եւս բոլորովին դադարել է իրերի դրութեան տէրը լինելուց, ամբողջապէս կորցրել է իր ոտքերի տակի հողը, բայց և այնպէս նա դեռ չէ յուսահատվում, չէ դադարում առաջվան եղանակով իր հրամանները արձակել, նոր ու նոր կարգադրութիւններ անել: Սակայն, նկատելով, որ իր հրամաններն ու կարգադրութիւնները ճշտութեամբ չեն իրագործվում, և ենթադրելով, թէ դրա պատճառները բոլորովին պատահական ու ժամանակաւոր բաներ են, նա այդ կարգադրութիւնները օր օրի վրա փոխում է, միշտ աշխատելով յարմարվել իրերի դրութեանը և միշտ յուսալով, թէ այսօր կամ վաղը ինքը դարձեալ պիտի կարողանայ իր նախկին հրամայողի ու ամեն ինչ տնօրինողի դիրքի մէջ մտնել:

Բայց ո՜րչափ զուր աշխատանք, ո՜րպիսի զուր յոյսեր:

Եւ այդ աշխատանքը, այդ միամիտ ու սրգիտութեամբ արված ջանքերը, որ միանգամայն յիշեցնում են Կրիլովի յայտնի «Квартеть» առակը (այն է, որ էշն ու արջը և այծն ու կապիկը կամեցել էին համերգ կազմել), շատ ծիծաղելի և զուարճալի պիտի լինէին, եթէ միայն նրանք հազարաւոր մարդկային զոհեր չը պահանջէին:

«Պետական Դուման արձակում ենք, և նոր Դումա պիտի գումարվի 1907 թւականի փետրվարի 20-ին»:

Այսպէս էր բիւրօկրատիայի օր օրի վրա փոփոխվող վերջին կարգադրութիւններից մէկը: Սակայն դեռ մի ամիս չանցաւ այդ վճռողական կարգադրութիւնից, և ահա յամառութեամբ արդէն խօսվում է, թէ պէտք է Պետական երկրորդ Դուման նոյեմբերին հրաւիրել: Եւ դա զուր խօսակցութիւն չէ, որովհետեւ բիւրօկրատիան ինքն էլ շատ լաւ է հասկանում, որ առանց Դումայի ինքը այլ եւս չէ կարող դիմանալ: Դեռ էլի Դումայի շնորհիւ էր, որ երկիրը համեմատաբար խաղաղ դրութեան մէջ էր գտնվում, որովհետեւ բիւրօկրատիայից բոլորովին յոյսը կտրած ժողովուրդը միմիայն իր ներկայացուցիչներից էր մի որեւէ դրական բաւարարութիւն ակնկալում իր ունեցած պահանջներին: Իսկ Դուման ցրվելուց յետոյ, ժողովրդի պահանջները նորից մնացին օդի մէջ կախված, և ինքը ժողովուրդն էլ մնաց անյոյս, անապաւէն: Շատ բնական է, որ նա ստիպված էր ամեն բան դարձեալ նորից սկսել: Եւ նա, ինչպէս մինիստրութեանը հաղորդել են այդ մասին, պատրաստութիւններ է տեսնում աշնանը նորից ապստամբութեան դրօշակ բարձրացնելու և նորից յուսահատական կռիւ մղելու կառավարութեան դէմ:

Թէեւ կառավարութիւնը բոլորովին քնած չէ, թէեւ նա իր տրամադրութեան տակ եղած բոլոր միջոցները գործ է դնում, ադմինիստրացիայի ամբողջ մեքենան լարել ու բանեցնում է, որպէսզի կարողանայ ամեն ինչ սաղմի մէջ խեղդել, բայց և այնպէս նա ինքն էլ զգում և հասկանում է, որ ամեն տեսակ հեղձ չէ կարելի պատժելներով կանգնեցնել, և սաստիկ դողում է այդ գալիք աշնան ահեղ հեղեղից:

Եւ իսկապէս, ոչ ֆոն-պլեվէյեան կոստաղի [illegible], որոնց այժմ վերադարձել է Ստոլիպինի կառավարութիւնը, ոչ կոմս Վիտէեան խաբեբայական քաղաքականութիւնը, ինչպիսին է զօրքի դրութիւնը բարելաւելու նպատակով հաստատված յանձնախումբը, որով կամենում են մի տեսակ զօրքին նորից կաշառած լինել ու նրան յետ կանգնեցնել ընդհանուր յեղափոխական շարժումներին միանալուց, անկարող պիտի լինեն սպառնացող շարժումների առաջը առնել:

Իսկ երբ այդ շարժումները սկսվեն, այս անգամ այլ եւս Պետական Դումա չէ, որ պիտի պահանջէ ժողովուրդը, որը անցեալ փորձից շատ լաւ տեսաւ ու հասկացաւ, թէ որպիսի նեղ շրջանակների մէջ էր դրված այդ Դուման, և թէ ինչպէս նա միանգամայն անզօր էր մի որեւէ դրական գործ կատարելու: Ոչ, ապագայ շարժումների հետեւանքը այլ եւս Դումա չի լինի, այլ այն, որից իրաւամբ այնչափ վախենում ու սոսկում է բիւրօկրատիան, այն է՝ Սահմանադիր Ժողով:

Եւ հէնց այդ, բիւրօկրատիային խղճալի սրբող, Սահմանադիր Ժողովի վախն է, որ կառավարութեանը լուրջ կերպով մտածել է տալիս, թէ արդեօք աւելի լաւ չէ՞ լինի նորից Պետական Դումայի հետ հաշտվել ու նրան նոյեմբերին հրաւիրել, քան թողնել, որ մինչեւ փետրվար այդ էլ ձեռքից գնայ և Սահմանադիր Ժողով գումարվի: Բայց, որպէսզի այդ նոյեմբերեան Դումայից էլ կառավարութիւնը մի բան վաստակած լինի, Ստոլիպինը դիմել է բոլոր գեներալ-նահանգապետներին, հարցնելով թէ արդեօք կարելի՞ է յուսալ ապագայ ընտրութիւններին, զանազան բռնի միջոցներով, կառավարութեան կողմնակից պատգամաւորներ ընտրել տալ: Մինչեւ այժմ մինիստրը իր այդ հարցումին հօթ գեներալ-նահանգապետներից է պատասխան ստացել, որոնցից վեցը բացասական պատասխան են տուել, այսինքն որ այդպիսի յոյս ունենալ անկարելի է: Պէտք է ենթադրել, որ մնացեալ նահանգներից էլ դրանից աւելի մխիթարական պատասխաններ չեն ստացվի: Իսկ դրանից յետոյ ինչ կը մնայ կառավարութեանը անել:

Այն, որ կամ, ընտրելով երկու չարեաց փոքրագոյնը, վերջնականապէս նա կը փոխի իր նախկին որոշումը և կը կարգադրի նոյեմբերին Դուման հրաւիրել, ամեն ջանք ու միջոց գործ դնելով, ի հարկէ, որ այդ Դուման կարելիին չափ խուլիգանական լինի, որը, անշուշտ, ոչ մի բաւարարութիւն չը տալով ժողովրդի պահանջներին, մազաչափ անգամ չի փոխի իրերի խառնակ ու փոթորկալից դրութիւնը, և կամ, ռուս մուժիկի նման, նա երեսը կը խաչակնքի ու կը նետվի բացարձակ կռուի մէջ, մտածելով՝ տեսնենք ինչ կը լինի վերջը:

Իսկ դրա վերջը, ինչպէս ասացինք, կը լինի միմիայն Սահմանադիր Ժողովը և բիւրօկրատիայի կատարեալ անկումը, որովհետեւ այլեւս երրորդ և միջին ճանապարհ չէ մնացել. բոլոր միջոցները արդէն փորձված և սպառված են: Երերուն քաղաքականութիւնն էլ իր վախճանը ունի:

Խ.-Ազատ

ՊԷՏՔ Է ԼՍԵԼ ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆԸ

Սկսած այն օրից, երբ հրատարակվեց օգոստ. 15-ին գումարվելի Կենտրոնական Ժողովի համար տրված կաթողիկոսական կոնդակը, մեր թերթերում սկսեցին լոյս տեսնել բազմաթիւ ու երկար յօդուածներ, որոնք թէեւ նուիրված այդ ժողովին՝ բայց շօշափում էին երկրորդական և շատ աւելի աննշան կարեւորութիւն ունեցող խնդիրներ, ինչպէս օրինակ՝ թէ հոգևորականներն այդտեղ մի որոշեալ քանակութեան յատուկ պատուաւոր բազկաթոռներ ունենալու են թէ ոչ, կամ օգոստոսի 15-ը յարմա՞ր ժամանակ է թէ աւելի լաւ է յետաձգել այդ ժողովը եայլն: Միայն երբեմն կենտ.-կենտ ընտրողական շրջաններից նուազ ձայներ էին լսվում ժողովում յարուցանելիք հարցերի մասին, մինչդեռ հէնց այս վերջիններս են ամենանշանաւորը և հասարակութեան, ինչպէս և մամուլի ամենամեծ ուշադրութեան և քննութեան առարկաները հէնց դրանք էլ պէտք է լինէին:

Սակայն որո՞նք են դրանք:

Վերոյիշեալ № 693 կոնդակի 8-դ §-ում ասված է. «Կենտրոնական Ժողովը, իբրեւ ռուսահայոց եկեղեցական գործերի կարգադրիչ և տնօրէն, կարող է իր քննութեանը ենթարկել և որոշումներ տալ ռուսահայոց բոլոր եկեղեցական գործերի վերաբերմամբ»:

Դա յօդուածի առաջին մասն է, որը, մեծ լիազօրութիւններ տալով Կենտ. Ժողովին, նրա տնօրինութեանն է թողնում ռուսահայոց բոլոր եկեղեցական գործերը:

Այդ բոլոր խօսքը չէ բացատրված և կարելի է, հետեւապէս, հասկանալ նրա ամենաընդարձակ մտքով, որի մանրամասնութիւններից մի քանիսը միայն յիշված են նոյն յօդուածի շարունակութեան մէջ հետեւեալ խօսքերով. «Կենտ. Ժողովի առաջիկայ նստաշրջանի առաջ դնում ենք իբրեւ անյետաձգելի կարեւորութիւն ունեցող խնդիրներ դպրոցական, տնտեսական գործերը և թեմական ժողովները կարգաւորելու հարցերը»:

Այս վերջին խօսքերը—դպրոցական, տնտեսական գործերը և թեմական ժողովները կարգաւորելու հարցերը—մասամբ պարզելով ժողովի նպատակը, առաջ են բերում սակայն նոր անորոշութիւններ ու հարցեր, որոնք պէտք է ժողովի բացվելուց առաջ բաւականաչափ ծեծված ու պարզված լինեն ոչ միայն պատգամաւորների համար, այլ և նախ ժողովրդի, որը այդպիսով հնարաւորութիւն կունենայ տրված հարցերին աւելի համապատասխան անձնաւորութիւններ ընտրելու և, որ ամենագլխաւորն է, թելադրելու պարտաւորիչ դարձնել նրանց համար իր որոշումներն ու կամքը, իւրաքանչիւր հարցին այս կամ այն ուղղութիւնը տալու մասին:

Այսպէս, օրինակ, ինչ պէտք է հասկանալ դպրոցական գործերը խօսքերի տակ. արդեօք դա նշանակում է դպրոցը դեմօկրատիական դարձնել, բաժանել նրան եկեղեցուց, տարրական ուսումը ձրի ու պարտադիր դարձնել սահմանելով դպրոցական ընդհանուր տուրք, հիմնական փոփոխութիւն մտցնել աւանդվող առարկաների որակի և քանակի մէջ, մի անգամ ընդմիշտ պարզել հոգաբարձուների, տեսուչի, ուսուցիչների և աշակերտների փոխադարձ յարաբերութիւնների սահմանները — նրանց պարարքն ու իրաւունքը—վերացնելով ներկայ քասայական դրութիւնը ևայլն ևայլն, թէ պէտք է վերականգնել հին կարգերը իրանց ամենաշքեղ հոգաբարձուներով, լիազոր թեմական ատեաններով և համր ու խոնարհ ուսուցիչներով ու աշակերտներով...

Սրանք այնպիսի կարևոր խնդիրներ են, որ սրանց վճիռը տալու համար ընդհանուր հայ ժողովուրդը պէտք է արտայայտի իր կամքն ու ցանկութիւնը և ոչ թէ 60 պատգամաւորները յանպատրաստից շտապով մի որևէ 2—3 շաբաթեայ ընթացքում։

Մենք բերեցինք միայն դպրոցական գործերի օրինակը. նոյնը պէտք է ասել և բոլոր եկեղեցական գործերի մասին։

Շատ ծանր դրութեան մէջ են դրվում 60 պատգամաւորները, որոնք չը գիտեն, թէ ինչ խնդիրներ վճռելու համար են ժողովի գնում, որքան պարզված են դրանք թէ իրանց և թէ մանաւանդ իրանց ընտրող ժողովրդի համար, որի կարծիքն ու կամքը նրանք իրաւունք չունեն չը լսել։

Սրանով ամենևին մտադիր չենք միանալ այն անձնաւորութիւնների հետ, որոնք այս կամ այն դիտաւորութեամբ պատճառներ են որոնում յետաձգել տալու Կենտ. ժողովը. ընդհակառակը, մենք դրա բացումն անհրաժեշտ ենք համարում, թէկուզ հէնց այն մի քանի «անյետաձգելի կարևորութիւն ունեցող խնդիրների» համար, որոնց շարքում անշուշտ առաջնակարգ տեղ են գրաւում «դպրոցական գործերը կարգաւորելու հարցերը»։ Սակայն մենք միայն ուզում էինք շեշտել այն հանգամանքի վրա, որ ժողովրդի համար տրվող օրէնքները պէտք է ոչ թէ շնորհվեն բարձրից, լինի դա մի անսահման միապետ թէ լիազորների մի ամբողջ ժողով, այլ նրանք պէտք է բղխեն հէնց ժողովրդի միջից։ Ամեն մի բարձրագոյն մարմին, եթէ նա գիտակցում է, որ կոչված է ծառայելու ժողովրդին, պարտաւոր է սրբագործելու և օրէնք դարձնելու միայն այն կարգը, ինչ որ ցանկանում և պահանջում է ժողովուրդը, որը կազմում է այդ ամենի հիմքն ու արմատը. հակառակ դէպքում նրա կառուցած շէնքաշ ամրոցները կը լինեն ոչ միայն ապօրինի և անկանոն կերպով կառուցված, այլ և անհիմն, դիւրաբեկ։

Ուստի անհրաժեշտ էր ամեն հարցի մասին նախ լսել ժողովրդի կարծիքը։ Հարկաւոր էր, որ ժողովի նախաձեռնութիւն յանձն առնող էջմիածինը կամ գոնէ հայ մամուլը պարզէին ժողովրդին ժողովի նիւթ լինելիք հարցերը, որից յետոյ թէ աւելի բազմակողմանի կը լինէր նրանց ուսումնասիրութիւնը և թէ, հետևապէս, աւելի ճիշտ և նպատակայարմար կը լինէին Կենտ. ժողովի որոշումները։

Եթէ նախապէս դրված լինէին այդ հարցերը, այն ժամանակ իւրաքանչիւր եկեղեցում պատուիրակների ընտրութեան ժամանակ մանրամասն խօսակցութեան նիւթ կը դառնային նրանք, որոնք թէ կրթիչ նշանակութիւն կունենային ժողովրդի համար և թէ պատուիրակների ու պատգամաւորների առաջ կը պարզէին իրանց ընտրող ժողովրդի տրամադրութիւնը, իղձերը, կամքը, որոնք, կրկնում ենք, անհրաժեշտ և պարտաւորիչ կը լինէին նրանց համար։

Եւ եթէ այս անգամ չը գործադրվեց այս ձևը, ցանկալի է, որ Կենտ. ժողովը ուշադրութիւն դարձնէր կարգադրելու, որ ապագայում ևս չը կրկնվէր նոյն թերութիւնը։

Կենտ. ժողովը զբաղվելու է միայն ռուսահայոց եկեղեցական գործերի կարգաւորութեամբ. ցանկալի համարելով և ընդհանուր համազգային ժողովի գումարումը, կարծում ենք, որ լաւ կը լինէր, եթէ Կենտ. ժողովում ծագէին և այնպիսի ընդհանուր հարցեր, ինչպէս օր. ապահարզանի, հաս ու չհասի, կուսակրօնութեան վերացման, քահանաների կրկնամուսնութեան, պասերի կրճատման և այլն, որոնք եթէ վեր լինելով այդ ժողովի իրաւասութիւնից չեն էլ կարող վճռվել, գոնէ բաւականաչափ պարզված կը լինեն ապագայ ընդհանուր հայկական համազգային եկեղեցական ժողովի նիւթ դառնալու համար։

Լ. Մարկոսեան

ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՄԷՋ

Մեր բիւրոկրատիան մի կատարեալ կախարդական շրջանի մէջ է ընկել և որչափ պտոյտ է անում, աշխատելով այդ շրջանի ծայրը գտնել, դարձեալ չէ կարողանում։

Հնարագէտ ֆոն-Պլեվէն, եթէ յիշում են ընթերցողները, կամենալով բանւորական շարժումներից եթէ ոչ բոլորովին ազատվել, գոնէ նրանց հոսանքը ուրիշ կողմ ուղղել, Ռուսաստանում պրոֆեսիոնալ միութիւններ հիմնել ու ինքն էլ մասնաւորապէս աջակցում էր այդ գործին, յատուկ ագենտներ էր վարձում, (որոնցից մէկը, յիշենք պատահ, հռչակաւոր Գապօն քահանան էր), որպէսզի դրանք, բանւորներին պրոֆեսիոնալ միութիւնների շուրջը համախմբելով, ամեն կերպ աշխատեն նրանց քաղաքական պահանջներից հեռու պահել և լոկ տնտեսական մանր-մունր խնդիրներով զբաղեցնել։ «Թող բանւորները, որչափ ուզում են, գծեն կապիտալիստներին, միայն թէ մեզ և մեր ռեժիմին ձեռք չը տան»,—մտածում էր տաղանդաւոր բիւրոկրատը։

Սակայն պրոֆեսիոնալ միութիւնների մէջ մտած բանւորները չը բաւականացան մանր-մունր խնդիրներով. նրանք իրանց պահանջների մէջ աւելի առաջ գնացին և շուտով, կապիտալիստների դէմ մղած իրանց առօրեայ կռիւների ու մի շարք զուտ տնտեսական գործադուլների ժամանակ, համոզվեցին, որ առանց քաղաքական ազատութեան անհնարին է տնտեսական ազատութիւն ձեռք բերել։ Իսկ այդ անհերքելի աքսիօմայի մէջ համոզվելով, շատ բնական է, որ պրոֆեսիոնալ միութիւնները կամ նրանց անդամներից շատերը վերջին դուրս եկան զուտ տնտեսական հողից և դարձան քաղաքական պահանջների վրա կանգնեցին։

Այդ բանը նկատելով Վիտտէ-Դուրնովոյի կառավարութիւնը անցեալ դեկտեմբերին կատաղի հալածանք սկսեց պրոֆեսիոնալ միութիւնների դէմ, ամեն չարիքի պատճառը այդ միութիւնները համարելով, չը նայելով որ Պլեվէի ժամանակներից բիւրոկրատիան պրոֆեսիոնալ միութիւնների մէջ իր միակ փրկութիւնն էր տեսնում և ինքն էր ամեն կերպ աշխատում, որ այդ միութիւնները բազմանան։

Հալածելով պրոֆեսիոնալ միութիւնները, փակելով նրանց կենտրոնական բիւրոները, կառավարութիւնը, սակայն, չը կարողացաւ բանւորական շարժումների առաջը առնել. ընդհակառակը նրանք աւելի ընդարձակվեցին ու մեծ ծաւալ ստացան, որովհետև նրանց պատճառ եղող քաղաքական ու տնտեսական պայմանները, ռեժիմը դեռ նոյնն էր մնում։

Վերջի իսկական պատճառներն ու պայմանները երբեք չը քննող բիւրոկրատիան, ճարը կտրած, նորից թոյլ տուեց, որ պրոֆեսիոնալ միութիւններ կազմակերպվեն, մտածելով, անշուշտ, թէ գուցէ այս անգամ այդ միութիւնները յիրաւի իրան նպաստեն բանւորական անհեթեթ շարժումներից փոքր ինչ թեթևանալու։ Բայց հազիւ մի քանի ամիս անցած, կառավարութիւնը նորից հիասթափվեց և այժմ դարձեալ իր հալածանքներն է սկսել պրոֆեսիոնալ միութիւնների դէմ։ Նա արդէն փակել է սրանց կենտրոնական բիւրոները թէ Պետերբուրգում և թէ Մոսկվայում և անշուշտ իր հալածանքները պիտի տարա ի բոլոր տեղերի վրա։

Սակայն ինչ օգուտ։ Միթէ պրոֆեսիոնալ միութիւնները արգելելով կարելի պիտի լինի բանւորների քաղաքական շարժումների առաջը առնել։ Չէ՞ որ այդ շարժումները սկսվել ու գոյութիւն ունէին դեռ այն ժամանակ, երբ դեռ պրոֆեսիոնալ միութիւնները չէին թոյլատրվում։ Սրանք չեն այդ շարժումների սկզբնապատճառը և մինչ բիւրոկրատիան իր ստեղծած կախարդական շրջանի մէջ պտոյտներ կանի, աշխատելով նրա ծայրը գտնել, նա միշտ շատ յիմար և ծիծաղելի դրութեան մէջ կը լինի...

Ռ.

ՆԵՐԿԱՅ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ

II

Այս բոլոր օրինաւոր կասկածները և երկիւղները կարծես փարատելու համար ֆինանսական իշխանութիւնը «Прав. Вѣст.»-ում և կաբինէտի կիսապաշտօնիկը «Россія»-ում (№ 179) տպեց այս տարվայ առաջին հինգ ամիսների եկամուտների գրեթէ լրիւ *) ընդհանուր հաշիւները, որը հեռագրական գործակալութիւնը «պաշտօնական» վերտառութեամբ հաղորդեց բոլոր լրագրներին, (տես «Մշակ» № 153, հեռագիրներ. թւերը հեռագրողի թէ սրբագրողի մեղքից այլայլված են)։ Ահա նա. հինգ ամսվայ եկամուտն է 873,7 միլիոն անցեալ տարվայ նոյն ժամանակամիջոցին 783,2 րուբլու դէմ, որով հետևում է, որ աւելացածը հասնում է 90,5 միլիոնի։ Երկաթուղիներից գոյացած ընդհանուր եկամուտը առաջին կիսամեակում անում է 212,4 միլիոն հակառակ 211,4 րուբլու անցեալ տարվայ։ Արտաքին վաճառականութեան շրջանառութիւնը առաջին կիսամեակում տուեց արտահանած ապրանքների արժողութեան առաւելութիւնը ներս մուծածների դէմ 183,948,000 րուբլի, 1905 թւին 212,857,000 րուբլու դէմ։ Արտահանված ապրանքների արժէքը 468,435,000, իսկ ներմուծված ապրանքների արժողութիւնը 284,487 000 րուբլի։ Անցեալ տարի համապատասխան թւերն էին 467,931,000 և 255,074,000, ներկայ տարվայ արտահանութեան արժէքը վերջին տասնամեակում ամենախոշորն է։ Մաքսային եկամուտը առաջին կիսամեակում անում էր 114,805,000 անցեալ տարվայ 101,621,000-ի դէմ։ Մաքսային եկամուտը նախահաշուի ենթադրածից աւել է 15,860,000 րուբլով։

Մենք չենք հետևի ֆինանսական իշխանութեան մեթոդին՝ համեմատել այս տարվայ եկամուտը անցեալ տարվանի հետ։ Մենք կը քննենք աւելի հետաքրքիր հարց. ի՞ր չափով եկամուտը արդարացնում է բիւջէի նախատեսած թւերը։ Ի՞նչ եկամուտ էր սպասվում ըստ բիւջէի հաշուի առած 5 ամիսներին. մենք վերցնում ենք սովորական եկամուտի (2,027,858,774) հինգ տասներկուերորդականը. դա կանէ 844,941,156։ Մեզ կառարկեն, թէ ուղղակի հարկերը մուծվում են սովորական տարվայ երկրորդ կէսին, հետևաբար զանազանութիւն պիտի լինի տարվայ առաջին և երկրորդ բաժինների մէջ. բայց մեր վիթխարի բիւջէում ուղղակի հարկերը այնքան աննշան դեր են կատարում, կազմելով ընդհանուր եկամուտի 7% կամ 8%, որ մեր հաշուի համար նշանակութիւն չունեն։ Համեմատելով ենթադրած թիւը իսկական եկամուտի հետ՝ 873,7 միլիոն, մենք կը տեսնենք, որ աւել մտել է մօտ 29 միլ. րուբլի։ Ինչ է դա նշանակում։ Նախ պիտի իմանալ կամ յիշել ընթերցողը, թէ որքան պակասեցրած են հաշւում միշտ եկամուտները բիւջէներ կազմելիս. դա աւանդութիւն է դառել ֆինանսական իշխանութեան համար. ահա որտեղից էր գոյանում պ. Վիտտէի օրօք հարիւրաւոր միլիոնները «աւելորդ» եկամուտները և ոչ թէ սա նշան էր ժողովրդի տնտեսութեան ծաղկման։ Երկրորդ չը պիտի մոռանալ, որ այս փետրվարին Գերմանիայի հետ առևտրի մաքսերը պիտի փոխվէին, համաձայն նոր առևտրական դաշնագրի, և մաքսերը այնպէս էին կազմած, որ վաճառականները մինչև նոր մաքսերի մտնելը իրանց օգուտը փնտռելով պիտի սովորականից աւել ներմուծէին և նոյնչափ արտահանէին։ Իբրև ապացոյց դրան [illegible] փետրվարի այն հարցադրումը, թէ որքան վնասվում են գերման վաճառականների շահերը ռուս մաքսատան ծառայողների անփութութեան շնորհիւ՝ չէ կարելի արագացնել գործողութիւնները։ Այս հանգամանքին պիտի վերագրել պաշտօնական հաղորդագրութեան այն կտորը, թէ «մաքսային եկամուտը նախահաշուի ենթադրութիւնից աւել է 15,860,000 րուբլով։ Ուրեմն ինչ կը մնայ խճճուկ 29 միլիոն յաւելուածից, եթէ հանենք այս 16 միլիոնը և ի նկատի ունենանք գլխաւորապէս պակասեցրած նախահաշուի եկամուտի կազմելը։ Վերջապէս յիշենք այս միջնադէպը. երբ Պետական Դումայի բիւջէի մասնաժողովում որոնում էին որտեղից տալ սովելաներին օժանդակութիւն, անդամ պ. Գ. Բ. Եօլլօսը նկատեց պ. մինիստրին. չը կա՞ն արդեօք մնացորդներ անցեալ տարվայ եկամուտից գոյացած, որ չէ մտել նախահաշւի մէջ։ Պ. մինիստրը պատասխանեց, որ թէև առաջին տասը ամիսներին գոյացել էր աւելորդ 80—85 միլիոն եկամուտ, որ թոյլ էր տալիս իր նախորդին (Շիպով) եզրակացնել թէ տարվայ վերջին նա՝ աւելորդ եկամուտը կը հասնի 120—125 միլիոնի, ինչպէս և նա ամենահպատակօրէն զեկուցել է դեկտեմբերին։ Բայց նոյեմբերին և դեկտեմբերին մուտքը այնքան անկանոն էր, այնքան անհամապատասխան սպասածին, որ վերև յիշած թիւը չափազանց քչացաւ (տես «Рус. Вѣд.», Դումայի նիստի սղագրական հաշիւը, № 163)։

Եթէ երկու ամսւայ այդքան փոփոխութիւններ կարող են առաջացնել, ապա որքան հեռու պիտի լինել ցնծալուց հինգ ամսվայ հաշիւների վրա հիմնած։

«Երկաթուղիներից գոյացած ընդհանուր եկամուտը առաջին կիսամեակում անում է 212,4 միլիոն, հակառակ 211,4 անցեալ տարվայ»։ Այս մէկ միլիոն աւելացումը այնքան չնչին է և ի հարկէ պատահական *), որ չարժէր նրա վրա կանգ առնել, եթէ կառավարութիւնը այս առիթով փիլիսոփայութեան մէջ չը մտնէր՝ ձգտելով այդ միլիոնով ապացուցանել ժողովրդի բարգաւաճումը։ Պ. Վիտտէն նոյնպէս իր ամենահպատակօրէն զեկուցումներից մէկում նշանակել էր, որ Ռուսաստանում թէյ սպառելը մարդագլուխ տարեկան քանի մսխալով աւելացել է, որից և կարելի է եզրակացնել, թէ ժողովուրդը ծաղկում է։ Եւ ճիշտ որ, պետական երկաթուղիներից սպասվում է 474,8 միլիոն, կէս տարին կանէ գրեթէ 238 միլիոն և սրա կողքին մէկ հատ միլիոն...

Եւ մենք դարձեալ կը վերադառնանք քննելու իսկական եկամուտի հետևանքը նախահաշուի սպասածին հետ։ Մենք ձեռքի տակ չունենք ռուս երկաթուղիների եկամուտի վիճակագրութիւնը, որ հաւասար կերպով առնենք, թէ տարվայ առաջին և երկրորդ կէսում եկամուտը բոլորովին հաւասար է. կան հանգամանքներ, որ կարծել են տալիս թէ երկրորդ կիսում եկամուտը աւել պիտի լինի, թէև ոչ նշանաւոր չափով։ Ընդհանուր սպասելիք եկամուտը այս պատճառով մենք պակասեցնում ենք 40 միլիոնով յօգուտ տարվայ երկրորդ կէսին, և դարձեալ դուրս է գալիս, որ սպասած եկամուտը ըստ նախահաշուի պիտի լինէր 217,4, իսկ մտել է գանձարան 212,4, այն է սպասածից շուրջ հինգ միլիոն պակաս։

«Ներկայ տարվայ արտահանութեան արժէքը վերջին տասնամեակում ամենախոշորն է»։ Եթէ համեմատելու լինենք, այդ ամենախոշոր արտահանութիւնը զանազանվում է 1/2 միլիոնով. ի հարկէ եթէ մէկ ռուբլով անգամ զանազանվէր, դարձեալ իրաւունք կայ ասելու, թէ «վերջին տասնամեակում ամենախոշորն է», բայց ինչ նշանակութիւն ունի այդ ամենախոշոր թիւը։ Յայտնի է, որ մեր արտահանութեան ամենախոշոր չափը ընկնում է հացահատիկների վրա. ռուս մուժիկը ոչ ունեցածից է արտահանում, այլ վերին ծայր աղքատութիւնից. նա ոչ ինքն է ուտում, ոչ հողին վերադարձնում նրանից ստացած ծը, իսկ մեզ հրաւիրում են ուրախանալ, որ արտահանութեան թւերը մեծանում են...

Վերջապէս թւերը համեմատելու համար այն էլ պիտի գիտենալ, որ 1905 թւի հանած շաքարի ակցիզի մի մասը այս տարվան էր յետաձգած շնորհիւ հարուստ շաքարագործների խնդիրքին. ուրեմն գանձարանը մտել է աւելորդ փող՝ անցեալ տարվայ հաշւից. ի հարկէ այս հաշիւը չէ բաց անում պաշտօնական հաղորդագրութիւնը։

Ապա ինչ եզրակացութիւն կարող է անել անշահ և մի քիչ գործին տեղեակ դիտողը հաղորդագրութիւնը լսելուց յետոյ, եթէ նա չի ցանկայ բաժանել պաշտօնական հրճուանքը...։

Պետրոս Զաքարեանց

Այս րօպէին յայտնի եղաւ, որ Կազալինսկի մօտ երկաթուղու կայարանը տանող ճանապարհին ձերբակալել են 2 թէ 3 հայի, որ կալոշներով պատրոններ են եղել տանում։ Քանի ժամանակ առաջ բոլորովին պատահմամբ յայտնի է դարձել, որ տեղական զօրանոցի պահեստից գողացել են բաւականաչափ պատրոններ։ Անցեալ տարի նոյն զօրանոցի պահեստից անհետացել էին հրացաններ, որոնց իբր թէ փնելու համար մեղադրվում էին չորս հայեր։ Այդ դէպքից յետոյ հսկողութիւնը խստացրած են եղել։ Գողութիւնը այսպէս է բացվել. քանի ժամանակ առաջ քաղաքից դուրս մի կին գտել է պատրոնների մի արկղ ու յանձնել ոստիկանութեան։ Դա առիթ է տուել աւելի ճիշտ քննել պահեստը և կորուստը յայտնի դարձնել։

Պ. Զ.

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ԲՈՂՈՔԻ ԴԷՄ ԲՈՂՈՔ

Ստացայ Թիֆլիսի հայ քահանաների այն բողոքագիրը, այն խնդրի ապացոյց պատճէնը, որ ժամուցել են Վեհափառ Կաթողիկոսին և որին համակրողները հրաւիրվում են ձայնակցելու առանձին խնդրագրով կամ հեռագրով յանուն Ս. Հայրապետի։

Կարդալով հայ քահանաների խնդրագիրը, գալիս եմ իմ բողոքը յայտնելու հրապարակով նրանց հիմնական կէտերի սխալ ըմբռնելու ու մեկնելու վերաբերութեամբ։

Իմ կարգակից քահանաները գտնում են՝ «ռուսահայ եկեղեցական կենտրոնական ժողովը իբրև մինը մեր հայ եկեղեցու պատմութեան մէջ տեղի ունեցած տեղական – մասնաւոր եկեղեցական ժողովներից». ուստի և պահանջում են, որ «1) այդ ժողովը գործէ իրան համար յատուկ որոշած սահմաններում և երբեք միջամուխ չը լինի ընդհանուր ազգային եկեղեցական ժողովների դարաւոր իրաւանց մէջ և 2) որ այդ ժողովին անշուշտ մասնակցէ հայ հոգևորականութիւնը», իրանց ներկայացուցիչներով ընտրված քահանայական դասի կողմից։

Բայց ինչի՞ց գիտեն տէր եղբայրները, որ ռուսահայոց կենտրոնական ժողովը պիտի միջամտի ընդհանուր ազգային եկեղեցական ժողովների դարաւոր իրաւանց մէջ։ Կաթողիկոսական կոնդակով անուանված է այդ ժողովը «ռուսահայոց եկեղեցական պատգամաւորական ժողով» և սահմանված է նոյն կոնդակով, որ «կարող է իր քննութեան ենթարկել և որոշումներ տալ ռուսահայոց բոլոր եկեղեցական գործերի վերաբերմամբ»։ Ուրեմն հայրապետական կոնդակը ինքը ճանաչում է այս ժողովը՝ «իբրև մինը մեր հայ պատմութեան մէջ տեղի ունեցած տեղական մասնաւոր եկեղեցական ժողովներից» և մինչև անգամ հայրապետական կոնդակը ինքը պարզ սահմանում է որ այդ ժողովը «կարող է քննութեան ենթարկել ու որոշումներ տալ ռուսահայոց բոլոր եկեղեցական գործերի վերաբերմամբ»։

Հետևապէս ինչ կարիք կայ այս մասին առանձին պահանջ յարուցանելու։

Իսկ ինչ վերաբերում է հայ հոգևորականութեան կողմից ընտրված հոգևորական ներկայացուցիչներ ունենալու պահանջին, ես գտնում եմ այդ պահանջը օտարոտի մեր եկեղեցու հոգուն։ Մեր հոգևորականութիւնն իրաւունք չունի դատվելու աշխարհականներից, իրաւունք չունի առանձին ժողով կազմելու և առանձին ներկայացուցիչներ ունենալու իր առանձին շահերը պաշտպանելու, առանձին ձայները տեղ հասցնելու համար։ Սրանով ապացուցած կը լինի, որ ինքը արդարև մի առանձնացած դասակարգ է, առանձին շահեր ունի հանրական հայ եկեղեցու մէջ։

Բողոքում եմ բոլոր ոյժովս։

Այդ պահանջը աւելի հասկանալի, աւելի «սովորական» կը լինէր, որ յարուցանէր «Դաշնակցութիւնը», որ՝ «Կովկասում նա կանգնում է դասակարգային հողի վրա, իսկ սահմանի այն կողմում (Տաճկաստան) ազգային»։ Իսկ մենք հոգևորականներս և հայ եկեղեցու ժողովուրդը պիտի բոլոր ոյժով բողոքենք մեր՝ «ի Քրիստոս եղբայրութեան» մեր «հաւասարութեան» սկզբունքի վրա հիմնված եկեղեցու մէջ դասակարգային խտրութիւն առաջ բերելու օտարութեան և անհաւասարութեան դէմ։

Տէր եղբայրներս գրում են, որ՝ «զուտ աշխարհական ժողով (դատական, վարչական, դպրոցական, տնտեսական) խնդիրներ կարգադրելու համար երբեք չէ եղել եկեղեցում»։ Բայց «զուտ աշխարհական ժողով» այսօր էլ չը կայ։ Եղածը «եկեղեցական» ժողով է, որ ընտրվում է եկեղեցու համայն ուխտի կողմից, համայն ուխտի մասնակցութեամբ։

Ժողով հրաւիրողը Ս. Հայրապետն է։ Ժողովներին ընտրելու իրաւունք ունին ամենքը, ովքեր հայ լուսաւորչական են՝ աշխարհական թէ հոգևորական։ Հոգևորականներս զրկված չենք ընտրելու և ընտրվելու իրաւունքից։ Բայց եթէ ընտրութիւնները այսօր այնպէս են առաջ տարվում, որ զուտ «դաշնակցականներ» են ընտրվում, այդ այլ խնդիր է և դրա դէմ այլ կերպ մաքառելու է. այլ ոչ երբեք առանձին հոգևորականների ժողովի պահանջ անելու, առանձին հոգևորական ներկայացուցիչ ունենալու։ Երբէք։ Բողոքում եմ։

Մեսրոպ աւագ քահ. Մելեան

Բաթում

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Օգոստոսի 6-ին

Այսօր հաստատ աղբիւրից իմացանք, որ տեղիս կոնսիստորիայի բոլոր ծառայողները իրանց ամսիս 4-ի մասնաւոր ժողովում որոշել են մի խնդրագրով դիմել փոխանորդ Յուսիկ եպիսկոպոսին և խնդրել, եթէ կարելի է, ա) կոնսիստորը տեղափոխել գոնէ առնուազը մի տարի ժամանակով հայոց թաղը, մինչև վերջնականապէս խաղաղութիւնը կը վերականգնվի քաղաքումս, ինչպէս այդ եղել է այս ամսվայ ընթացքում։ Որովհետև ծառայողները և թէ տեղին ծանօթ մարդիկ անհնարին են համարում թուրքերի բազարի և դայֆախանաների միջով անցնել գնալ կոնսիստորիա, և բ) աւելացնել ռոճիկները սղերի և մթերքների սաստիկ թանգութեան պատճառով։

Խնդիր ներկայացնողի հետ եպիսկոպոսը տաք վիճաբանութիւն է ունեցել։ Միանգամայն զարմանում ենք մի հասկացող եպիսկոպոսի այս վարմունքի վրա, թէ սա ինչ կապ է, որ անում է փոխանորդը։ Եւ միթէ կարելի է չը մտածել անգամ այն տասնեակ անմեղ մանուկների կեանքի համար, որոնց գոյութիւնը կախված է հէնց իրա ծառայողներից։ Միթէ պէտք չէր մտածել նաև իր խնդրատու խեղճ գիւղացիների և կանանց մասին, որոնք ստիպված, իրանց գործի համար, երեխաների հետ գալիս են կոնսիստորիա և ճանապարհին ի զուր զոհ են դառնում թուրքի սրին։ Քանի-քանի այսպիսի խնդրատուներ սպանվել են կամ սպանութիւնից մի հրաշքով ազատվել հէնց այդ ճանապարհին։

Մեր փոխանորդը ստանում է ձրի բնակարան, 2400 ր. ռոճիկ և կողմնակի արդիւնքներ, որոնք հասնում են 5—600 ր.։

Միթէ այդ քան ռոճիկ ստացող եպիսկոպոսը դժուարանում է շաբաթվայ մէջ երկու անգամ կառքի փող տալ ու գնալ քաղաք՝ կոնսիստորիա. ապա ինչպէս չնչին ռոճիկ ստացող ծառայողը 6 օր կառքի փող տայ ամենավտանգաւոր տեղով անցնելու—ամեն րոպէ աչքի առաջ ունենալով իր մահը։ Այս դէպքում, երբ իրանց կեանքը ապահովցնելու և ռոճիկը աւելացնելու համար արդար պահանջ են գնում, եպիսկոպոսը սպառնում է նրանց վռնդել և խեղդելով նրանց արդար բողոքը, մուրացկանութեան դուռն է ուզում հասցնել նրանց։ Միթէ նրանք աշխարհի խորթ զաւակներն են, իսկ հոգևորականները...։

Մեր կարծիքով պէտք է ծառայողների խնդիրը և նրանց պահանջը արդարացի համարել և բաւականութիւն տալ՝ ապագայում նոր գործ չը տալու։

Եղանակը մեզանում զգալի կերպով փոխվեց. կարծեք սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներում լինենք ապրելիս։ Մրգի առատութիւն և էժանութիւն է տիրում քաղաքումս։

Գ. Աղզալեանց

ԲԱՑ ՆԱՄԱԿ Պ. Ս. ՏԻԳՐԱՆԵԱՆԻՆ

Պ. Տիգրանեան, դուք նկատութիւն էք յանձն առել քննադատել «Մշակում» տպված մեր յօդուածը։

Ձեր յօդուածների շարքում Պենիպալի նման արհամարհոտ հայեացք էք ձգում նրանց վրա, որոնք ձեզ պէս չեն մտածում և ձեզ պէս թուիչքներ չեն անում. և ձեր հակառակորդների հասցէին շարում էք ձեզ հաճելի էպիտետներ. դրանով դուք հաստատում էք Շօպենհաուէրի խօսքերը թէ՝ «Սէրն և ատելութիւնը միանգամայն խեղաթիւրում են դատողութիւնը. հակառակորդի մէջ մենք տեսնում ենք միմիայն պակասութիւններ, իսկ սիրելիների մէջ՝ միմիայն արժանաւորութիւններ. մինչև անգամ սրանց պակասութիւնները մեզ թւում են սիրոյ արժանի... Այն, ինչ որ մեր շահին ձեռնտու է, իսկոյն մեզ թւում է խելացի, ազնիւ, գիտակցական, իսկ այն, ինչ որ հակառակ է, ներկայանում է մեզ, առանց հանաքի, անազնիւ և զզուելի կամ աննպատակայարմար ու անմիտ։ Մեր ընդունած տեսութիւնը մեզ տալիս է սուր տեսողութիւն տեսնելու այն բոլորը, ինչ որ նրան հաստատում է, և մեզ կոյր է դարձնում այն բոլորի առաջ, ինչ որ ժխտում է։ Այն բոլոր բաները, որոնք հակառակ են մեր կուսակցութեան, մեր ծրագրին, մեր ցանկութեան, մեր յոյսերին, յաճախ մենք չենք կարողանում ըմբռնել ու հասկանալ, և ընդհակառակը՝ ինչ դրանց նպաստում է, աչքի է զարկում դեռ հեռուից։ Ինչ որ հակառակ է սրտին, նա տեղ չունի և գլխում» («Աշխարհը որպէս կամք և երևոյթ», հատ. II եր. 244)։ Այս բաւական չէ, դուք իրաւունք էք համարում մտնել մեր սրտի մէջ և մեր ասածների մէջ կեղծաւորութիւն որոնել («Մշակ» № 164)։ Ձեր արարքը յիշեցնում է մեզ յոյն սատիրիկ Լուկիանոսի պատմած Միկիլլի աքաղաղի արարքը, որ իր տիրոջ հաւատացնում էր, թէ ինքը մեծ փիլիսոփայ Պիւթագորասն է և ամենագէտ... Եթէ խօսքը կեղծաւորութեան մասին է, թոյլ տուէք ձեզ յիշեցնել ռուսական առածը. «Ում կովն էլ որ չը բառաչի, քոնը պիտի լռի»։ Միթէ մոռացել էք 1903 թւականը. չէ՞ք յիշում, թէ ինչպէս իբրև իրաւաբան «սեազլուններին» փորձում էիք համոզել «յանձնել կալուածները, ստացուած լական-յանձնողական արձանագրութիւնների տակ ստորագրել, ապա բողոքել։ Յետոյ ծալեցիք ձեր դրօշը, դրիք իմաստուն և «օրինական» խորհուրդներդ և հակառակ ձեր համոզման, նոր կուրսով սկսեցիք գնալ և այսօր դուք էք կասկածում ուրիշների անկեղծ լինելու մասին։

Մատթէոս վարդապետ

Ս. Էջմիածին, օգոստոսի 4-ին

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 27 յուլիսի

Կարդալով «Մշակի» № 159-ում զետեղված Ա. քահ. Վարդանեանի նամակը չէի կարող չը սարսափել։

Միթէ հայ հայդուկը այնքան է կորցրել իր հմայքը, որ մի քահ. մարդ, այն էլ իր խոստովանութեամբ, որպէս թէ հայ կռւողները իր սիրոյ ամենամերձ առարկան են եղել, այժմս ստիպված է դաւաճան կոչելու նրանց, որովհետև նրանք Սասունը թողած, սինօդի արխիվներն են քրքրում և այլն։

Ընդունելով բոլոր այդ լուտանքները, դիմում եմ ազատութեան մարտիկներին.

Ընկերներ, կեանքի ընթացքում մենք տարել ենք անվերջ հալածանք ու դառն անարգանք. այդ է եղել մինչև այժմ մեր անբաղդ ճակատագրի անփոփոխ ընկերը. բայց այժմ մի նոր բան՝ դաւաճան լինել ըստ տէր-բարայի դա սոսկալի է. մինչև այսօր մենք եթէ լաւ ու մութ տարել ենք հասարակութեան մեզ հասցրած լուտանքները, այդ երբեք չէր խանգարում մեզ, և մեր հոգին միշտ անդորրաւէտ ու անխռով տանում էր գաղափարի լուծը հեզ ու համբերատար՝ ինչպէս եզը։ Մինչև այժմ հայ մարտիկը անմատչելի լեռների անվեհեր իշխանն էր և մեծ գաղափարի պաշտօն սիրահարը. աշխատում էր և քրտնում, յոգնում էր և տանջվում, բանտ ու շղթայ, կախաղան և մահ. այսպէս, այս պայմաններում՝ հոգին դարձեալ անխռով, լեռների ծերպերում, կը խոկայր աներկիւղ, մինչև կը հասնէր թշնամու մահաբեր գնդակը և իր սիրած հողի զոհը կանէր զայն։ Նա կրկնէր ինչպէս հերոս և նրա արեան շիթերից նոր բոյսեր էին ծլում։ Ինչքա՜ն էին այդ բոլորը. մոլորութեան, թէ մարդկային մեծ իդէալի յաղթանակ։

Ընկերներ, ահա մի լուրջ հարց, որը ինչպէս աշտարակ ցցվել է Դաշնակցութեան հրապարակում. ոմանք գովում և ոմանք դատափետում. մէկը նոր գոյն է տալիս, իսկ միւսը իր բնական գոյնի մէջ է կամենում տեսնել նրան, իսկ մեզ, թշուառ մարտիկներիս, վիճակվել է այսուղ-այնուղ դիտել այդ բոլորը և այնուհետև խաղալիք դառնալ մարդկանց ձեռին։ Եւ այդ դեռ բաւական չէր, բաւական է այն, որ այժմ դաւաճան ենք մենք։ Ընկերներ, դրութիւնը փոթորկոտ է, նրա ամեն մի թափը սաստիկ մահաբեր. շփոթութեան, ծայրայեղ շփոթութեան ժամանակը պէխեր հողը մեր ոտների տակ սաստիկ երերուն. մեր շուրջը չարքեր են վխտում, ու մեր անձնքին չար բան փչում. ինչ են այդ փափսուկները, եթէ ոչ այլասերուող գաղափարների կտոր ու բըրթուշ փշրանքներ. և շնորհիւ այսպիսի պայմանների մեր մնջնալը սաստիկ դառնացել է, կարծես հարամ լինի նա. ապրել այսպիսի պայմաններում, թէ յեղափոխութեան մէջ յեղափոխական նոր պայքար մղել. վճռեցէք այս հարցը։

Խմբապետ Միհրան

Ծանօթութիւն խմբագրութեան.—Ներկայ նամակը, որ գրված է ինքնապաշտպանութեան նուիրված մարդկանցից մէկի ձեռով, ցոյց է տալիս, թէ ինչպիսի ծանր հոգեկան դրութեան է ստեղծված այն մարդկանց համար, որոնք պատրաստ են իրանց զոհ բերել գործի համար, բայց որոնց համար մի ծանր քար է այնպիսի կացութեան մէջ դրված լինել, որ դեռ մեղադրանքների ենթակայ լինեն։ Այո, այդ տղերին պէտք է տալ համապատասխան իրանց իղձերին գործադրութիւն և նրանց ուսերի վրա չը դնել այն, ինչ որ նրանց չէ վերաբերում և որի պատճառով նրանք դեռ մեղադրանքների են ենթարկվում։ Նրանք չեն ցանկանայ վատ դեր կատարել։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այսօր, օգոստոսի 10-ին, Յովնանեան դպրոցում տեղի կունենայ դպրոցի հոգաբարձուների ընտրութիւնը։

Վաղը, օգոստոսի 11-ին, առաւօտեան ժամը 10-ին, առաջնորդարանում կայանալու է Թիֆլիսի կողմից ընտրված պատուիրակների ժողով՝ ընտրելու համար այն 4 պատգամաւորներին, որոնք մասնակցելու են օգոստոսի 15-ին Էջմիածնում կայանալիք Կենտրոնական Համագումարին։

Մի քանի ժամանակ սրանից առաջ սրբազան սինօդում քննվել է, ինչպէս հաղորդում է «Правит. Вѣст.»-ը, վրաց հոգևորականութեան դէմ յարուցված գործը, որի էութիւնը հետևեալն է. երբ սխալ լուր տարածվեց, որ Մինգրելեան 27 զինւորներին մահվան են դատապարտել կախաղանի միջոցով, գնդի մէջ տեղի ունեցած անկարգութեան համար, կովկասեան Փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկովի անունով վրաց հոգևորականութիւնից հեռագիր է ստացվում, որով պահանջում են թեթևացնել դատապարտեալների վիճակը, հակառակ դէպքում սպառնում են այլևս չը յիշատակել եկեղեցիներում կառավարութեանը։ Քննելով այդ գործը, սինօդը որոշեց նկատողութիւն անել և բացատրել տեղական թեմական տեսչութեան միջոցով, որը ուղարկել է վրաց հոգևորականութեան խնդիրքը, մի այդպիսի պահանջի անտեղի լինելը, որը մանաւանդ ուղղված է ոչ հոգևոր բարձր իշխանութեան, այլ մարմնային՝ ի դէմս կովկասեան Փոխարքայի։ Այդ առիթով «XX Вѣкъ» լրագրի հաղորդած լուրը, որ իբր թէ սինօդը որոշել է քննութիւն կատարել, միանգամայն մտացածին է։

—

Ներկայումս, ինչպէս հաղորդում է «Бирж. Вѣд.» լրագիրը, մուսուլմանների ականաւոր ներկայացուցիչները աշխատում են թոյլտւութիւն ստանալ մուսուլման ներկայացուցիչների համառուսական համագումար հրաւիրելու համար։ Համագումարը մտադրութիւն կայ հրաւիրելու մօտաւորապէս օգոստոսի 15-ին Նիժնի-Նովգորոդում։

—

Թիֆլիսի Խարփուխ թաղի ս. Սարգիս վանքի ծխականները ընտրելով հոգաբարձուներ Ղորղանեանին, Անանեանին, Շարաֆեանին և Արաղեանին՝ յանձնարարել են վերջիններին դիմել Նորին Վեհափառութեան և խնդրել նախ վերացնել վանահայրութիւնը, երկրորդ դարձնել վանքը եկեղեցի և յատկացնել եկամուտները եկեղեցուն և դպրոցին։

—

«Кавказъ» լրագիրը հաղորդում է, որ Թիֆլիսի ժամանակաւոր գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ դադարեցրված է «Կայծ» լրագիրը իր վնասակար ուղղութեան պատճառով մինչև զինուորական դրութեան վերացումը։

—

Թիֆլիսի ժամանակաւոր գեն.-նահանգապետի կարգադրութեան համաձայն, «Ալիք» լրագիրը դադարեցված է մինչև զինուորական դրութեան վերացումը։

—

Տնային վարժուհի Ֆ. Ս. Վարդանեանը դիմել է նահանգապետին խնդրելով թոյլ տալ իրան հրատարակել Թիֆլիսում հայերէն լեզուով իր խմբագրութեամբ մի ամենօրեայ լրագիր «Պայքար» անունով։

—

Ա. Դ. Բաշբէուք-Մելիքովը թոյլտւութիւն է ստացել հրատարակելու Թիֆլիսում ռուսերէն լեզուով մի շաբաթաթերթ «Новости Дня» (Օրվայ նորութիւններ) անունով, որի մէջ կը մտցվեն բացառապէս հեռագիրներ։

—

Ինչպէս հաղորդում են «Отг.» լրագրին, Պետական Դումայի նախկին պատգամաւոր Իսիդոր Ռամիշվիլին հասել է Բաքու։

—

Մամուլի գործերի վարչութիւնը բացատրել է, որ ցենզուրական կոմիտէները իրաւունք չունեն ցուցմունքներ տալ ոչ լրագրական արտելներին, ոչ էլ մասնաւոր լրագրավաճառներին այն բանի մասին, թէ ինչպիսի լրագիրներ կարող են վաճառել վերջինները։ Լրագրավաճառների մօտից լրագիրները կարող են գրաւել բացառապէս միայն արտաքին ոստիկանութեան պաշտօնեաները։ («Р. В.»)

—

Դերբէնդից պ. Բագրատ Ասրիեան խնդրում է մեզ յայտնել, որ «Մշակ»-ին Դերբէնդից թղթակցող «Դարբիմանը» ինքը չէ։

—

Թիֆլիսի քաղաքային վարչութեան ժողոված տեղեկութիւններից երևում է, որ 1904 թւին քաղաք է ներմուծվել 485090 պուդ նաւթ, իսկ 1905 թւին 326287 պուդ։ Վերջին տարվայ քանակութեան քչութեան պատճառը անցեալ տարվայ դեկտեմբեր ամսվայ երկաթուղու գծի գործադուլն է, որի ժամանակ ներմուծվել է միայն 1224 պուդ։ Ամենամեծ նաւթի քանակութիւնը ներմուծվում է յունվար, փետրվար, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներում։ Ամենաշատը ներմուծում են «Լիմէն», «Սլէյ» և «Մազութ» ընկերութիւնները։

—

Զարգարեանի փափուկ ոտնամաններ կարելու գործարանը փակվելով մի քանի տասնեակ բանւորներ և բանւորուհիներ դուրս են նետվում գործարանից փողոց։

—

Նորեկ ինժ. Ֆայնին էլէկտրաքարշի ծառայողները ներկայացրել են մի շարք պահանջներ, որոնց թւում գլխաւոր կէտերն են՝ վերընդունել պաշտօնից հեռացված և աքսորված ծառայողներին, տալ բոլոր պաշտօնեաներին գործադուլի ժամանակ չաշխատած օրավարձը, տալ աւելորդ ժամերի վարձը և այլն. ինժ. Ֆայնը խոստացել է միջնորդել գեն.-նահանգապետի առաջ աքսորված ընկերներին վերադարձնելու համար։ Մնացած պահանջները խոստացել է ինքը կատարել։

—

Աբասթումանից մեզ հաղորդում են, որ այնտեղի բոլոր խանութների աշկերտները գործադուլ են արել, պահանջելով ռոճիկը աւելացնել և կիրակի օրերը չաշխատել։

—

Ստացանք Նոր-Ջուղայի և գիւղօրէից ազգային-կրօնական բարեգործական և կրթական հաստատութիւնների 1903 թ. տարեկան հաշիւը։

—

Բորչալուի գաւառի Շամլուխ, Ալավերդի և [illegible] գիւղերում օգոստոսի 2-ին պղնձի գործարանների բոլոր բանւորները, թւով մօտ 3,600 հոգի, ներկայացնելով գործարանատէրերին (ֆրանսիական ընկերութիւն) տնտեսական պահանջներ, գործադուլ են արել։ Գործադուլ անող բանւորների 70% մահմեդականներ են։ («Т. Л.»)

---

*) Չը կայ Սախալինից և արտասահմանեան մի քանի բանկերից տեղեկութիւններ։

*) Պատահական ենք ասում, քանի որ առաջին հինգ ամիսներում ընդհակառակը եկամուտը անցեալի հետ համեմատած պակաս էր 3 միլիոնով, յունիսի եկամուտը անցեալ յունիսի դէմ աւել էր 4 միլիոնով, որտեղից և առաջ եկաւ այս մէկ միլիոնը։ Հետաքրքիր է, որ մնացած հաշիւները վերաբերում են 5 ամսվան. երկաթուղու համար աւելացրած է յունիսը, լաւ տպաւորութիւն գործելու համար։

Պ. Զ.

Օգոստոսի 7-ին, գիշերվայ ժամը 3-ին, երեք անյայտ աւազակներ Կումիս գիւղի քարափից մտնում են տեղացի Դաւիթ Բօշեանցի տունը, որը այդ օրը բացակայ է եղել տնից։ Աւազակները կամենում են մորթել Դաւիթի կնոջը և ապա կողոպտել տունը։ Տան մէջ գտնում են միայն 80 ր. կանխիկ փող, մի ատրճանակ, ժամացոյցի շղթայ, արծաթէ գօտի և այլն։ Չարագործները փորձում են սպանել կնոջը, բայց երեխաների միջամտելուց թողնում և հեռանում են։

Ս. սինոդի ուկազի համաձայն որոշված է քահանայ Իօն Բրինիշէվին աքսորել Վալամսկի վանքը (Ս. Աղեքսանդր Սվիրսկու կղզում)։ Յիշեալ որոշումը հետևանք է Կուրսկի նահանգապետի միջնորդութեան, որով նա խնդրել էր ներքին գործերի մինիստրին հայր Բրինիշէվին աքսորել ոչ թէ Գժինի անապատը, ուր հ. Բրինիշէվը գուցէ կարող կը լինէր վատ ազդեցութիւն գործել տեղական ազգաբնակութեան վրա, շնորհիւ անապատի նահապետական կեանքի, այլ աւելի հեռաւոր մի վանք, ուր տիրէր խիստ վանական կեանք միայն։

«Правит. Вѣст.»-ում տպագրված է. «Ռուսաց ժողովրդի միութիւնը սեպտեմբերից բանում է նախընտրողական ժողովներ իր բոլոր բաժանմունքներով, բացի Վասիլէօստրովսկի և Վիբորգի բաժանմունքներից, որոնք ժամանակաւորապէս փակված են։ Նոր բաժանմունքներ են բացվում Ռօժդէստվենսկի և Նարվի մասերում։ Եարօսլաւի և Պետերբուրգի բաժանմունքների մէջ կայացած համաձայնութեամբ, մտադրութիւն կայ հիմնել մի առանձին ապահովագրական ընկերութիւն անարխիստների ձեռքով սպանվելու դէպքերի համար»։

Ոստիկանական դեպարտամենտի ստացած տեղեկութիւններից երևում է, որ օգոստոսի 1-ից մինչև 4-ը, այդ երեք օրվայ ընթացքում, Պետերբուրգում և Մոսկվայում կալանաւորվել են 210 հոգի։ («Р. В.»)

Օգոստոսի 15-ին ժողովրդական լուսաւորութեան մինիստրի նախագահութեամբ, Պետերբուրգում, մտադրութիւն կայ համալսարանների տեսուչների և մասնագիտական բարձրագոյն դպրոցների վերատեսուչների համագումար կազմել։ Համագումարի նպատակն է մշակել միջոցներ ճեմարանական կանոնաւոր կեանքը վերականգնելու համար։

Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրի կարգադրութեամբ, վերացված են այն գրասենեակները, որոնք գոյութիւն ունէին մի քանի երկաթուղիների վրա երկաթուղու ծառայութեան համար յատկապէս քննութիւնների գործերը վարելու նպատակով։

ԲԱԼԱԽԱՆՈՒՑ մեզ գրում են. «Մանթաշեանի բանուորները սկսել են աշխատել, ստանալով պահանջի գլխաւոր կէտերը. Նաւթահանքերից մի քանիսը կանգած են տեղ չը լինելու պատճառով. շատանի ծառայողները շարունակում են գործադուլը. օգ. 5-ին նրանց պաշտօնապէս յայտարարվեց հաշիւ. ոչինչ նոր բան բացի հին «միջոցներից». ադմինիստրացիան գիտէ թէ ում վրա կարելի է յոխորտալ. Նաւթահանքերում շարունակվում է ժանդարմիական հարց ու փորձը, խոստացած ռէֆօրմների համար... Կասպեան ընկերութիւնը գոհացրեց իր ծառայողներին. Նոբէլը նորից սկսել է բանակցութիւնները. երկար գրելու տրամադրութիւն չը կայ. այստեղ զանազան կուսակցութիւններ, օգտվելով դէպքից, իրանց «գինուորներին» գցում են գործի մէջ. գաւառից եկած գիւղացին ամիսներով մնում է վիզը ծուռ, գրասենեակների հանդէպ»։

Օգոստոսի 3-ից վերստին լոյս տեսնող «Товарищъ» լրագիրը հաղորդում է. «Ներկայումս բիւրոկրատական շրջաններում խօսում են նորից հասարակական գործիչների հետ բանակցութիւններ վերսկսելու հնարաւորութեան մասին։ Պետերհօֆում այժմ մեծ ուշադրութեամբ հետևում են մինիստրների խորհրդի գործունէութեանը, մանաւանդ առանձին հետաքրքրութեամբ սպասում են իշխան Վասիլչիկովի գործունէութեան սկսվելուն խորհրդի մէջ, որը այժմ համարվում է պալատական կուսակցութեան առաջին սիրելին։ Եթէ այդ գործունէութիւնը կընթանայ աջող, այսինքն եթէ պալատականները գոհ կը մնան նրանից, այն ժամանակ հասարակական գործիչների հետ բանակցութիւնը չի վերսկսվիլ, և իշ. Վասիլչիկովը կը նշանակվի պրեմիեր։ Իսկ եթէ իշխանը չի արդարացնի իր վրա դրված յոյսերը, բանակցութիւնները հասարակական գործիչների հետ կը վերսկսվեն։ Ինչպէս ներկայ մոմենտում որևէ բան նախատեսելը շատ դժուար է շնորհիւ այն միջամտութիւնների, որոնք այժմ աւելի են դերիշխում քան առաջ, որովհետև միաժամանակ կառավարող շրջանների զիջումն անելու տրամադրութեան հետ, չեն դադարում և դիկտատուրա նշանակելու մասին խօսակցութիւնները։

Թիֆլիսում հրատարակվող «Отголоскі» լրագիրը զետեղել է հետեւեալ լուրը։ Քաղաքային այգիների և պարտէզների կառավարիչ Ռոմանովը ստացել է հետեւեալ բովանդակութեամբ նամակը. «Մեծապատիւ պ. Ռոմանով. Մենք, «Դաշնակցութիւն» կուսակցութեան մի խումբ անդամներս, առաջարկում ենք ձեզ թողնել ձեր պաշտօնը և հեռանալ Թիֆլիսից դուրս։ Բաւական է, բաւական է ձեզ իշխել և չարանալ. հասել է ժամը և դուք պէտք է հեռանաք։ Եւ ինչպէս տարօրինակ է, որ դուք մինչև այժմ մնացիք այդ պաշտօնում։ Ի նկատի ունեցէք, որ մենք բոլորովին ուրիշ տեսակ մարդիկ ենք և այլ ևս չենք տայ, որ մի ոչ մեզանից աւելի երջանիկ կեանք վայելէ. մեզ մերոնք էլ բաւական են։ Նախազգուշացնում ենք ձեզ ընտրել երկուսից մէկը—կամ պաշտօնը թողնել և հեռանալ, կամ կեանքից հրաժարվել։ Ժամանակամիջոց է տրված մինչև օգոստոսի 10-ը։ Եթէ նշանակված ժամանակամիջոցից յետոյ ձեր ոտը Թիֆլիսում կը լինի, այդ դէպքում գլխովին կը կոտրվէք»։ Պ. Դ.» (Իսկականի պատճէնը)։ Առաջարկում ենք «Դաշնակցութիւն» կուսակցութեանը պարզաբանվել այս փաստերը։ («Отг.»)

Առևտրա-արդիւնաբերական կուսակցութիւնը եռանդուն կերպով բանակցութիւն է սկսել «Խաղաղ վերանորոգութեան կուսակցութեան» և «Հոկտեմբերի 17-ի միութեան» հետ համաձայնութիւն կայացնելու առաջիկայ ընտրութիւններին համերաշխ կերպով գործելու համար։

Ինչպէս լսել է «Р. В.» լրագիրը, դատաստանական պալատի դատախազ Կամիշանսկու նամակը, որ տպագրված էր «Правит. Вѣстн.»-ում, լոյս է տեսել նրանից յետոյ, երբ օգոստոսի 1-ին մինիստրական խորհրդի մէջ քննվել է Պետական Դումայի պատգամաւորներին դատի ենթարկելու հարցը։ Դատի ենթարկելու ամենաջերմ պաշտպանն էր երկրագործութեան նոր մինիստր իշ. Վասիլչիկովը։ «Р. В.»

Հերցենշտէյնի սպանութեան մէջ մեղադրվող ժանդարմական ունտեր-օֆիցեր Զապօլսկու մասին «Правит. Вѣстн.»-ում տպագրված է հետեւեալը. «Нов. Время» լրագրի մէջ մօտ ժամանակներս տպագրվել էր մի լուր, որով հաղորդվում էր, որ Ներքին գործերի մինիստրը պահանջել է ազատել Տերիօքի կայարանի ժանդարմ Զապօլսկուն, որը կալանաւորված է առանց որոշ փաստերի, այլ լոկ կասկածի հիման վրա, որ նա մասնակից է Պետական Դումայի նախկին անդամ Հերցենշտէյնի սպանութեանը։ Այդ տեղեկութիւնը սխալ է. Զապօլսկին ազատված չէ և պահվում է Վիբորգի բանտում։ Իսկ նրա գործը տիրող օրէնքների ճիշտ հիման վրա ֆինլանդական իշխանութիւնը յանձնել է զինուորական դատաստանական իշխանութեանը քննութիւն կատարելու համար։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

8 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 օգոստոսի։ Կրասնօսէլսկի վիճակի գիւղացիների կողմից ներկայացված պատգամաւորութեան շնորհաւորական ուղերձին Թագաւոր Կայսրը բարեհաճեց պատասխանել հետեւեալ խօսքերով. «Շնորհակալ եմ ձեզանից ձեր աղ ու հացի համար. շնորհակալ եմ, որ դուք մտադրվել էք անյողդողդ խաղաղ և հանդիստ համբերատարութեամբ սպասել այն ձեռնարկութիւնների իրականանալուն, որոնց Ես անհրաժեշտ եմ գտել՝ գիւղացիական կարիքները արագ և փութով լուծելու համար»։

Ներքին գործերի մինիստրութեան կից կազմված միջ-վարչական մասնաժողովը, զբաղվելով բացառիկ օրէնքները վերաքննելու հարցով, ձեռնարկել է նոր նախագիծ կազմելու աշխատանքներին։ Մասնաժողովը միաժամանակ անհրաժեշտ է գտել յօրինելու անձի և բնակարանի անձեռնմխելիութեան նոր կանոններ, ուշադրութեան առնելով հանդերձ Պետական Դումայի մասնաժողովի՝ այդ հարցի առիթով մշակած օրինագիծը։ Մասնաժողովը իր պարապմունքները կաւարտէ մօտի ապագայում։

ԿԱԶԱՆ, 8 օգոստոսի։ Չեբօկսարի քաղաքում և գաւառում ծագած յուզմունքի պատճառով, քաղաքից մեկնեց փոխ-նահանգապետը։

ԿՕՍՏՐՈՄԱ, 8 օգոստոսի։ Սերեժ գիւղի անկարգութիւնները զօրքերի գալով վերջացան առանց արիւնհեղութեան։ Գործարանային բանուորներից շատ շատերը դէմ են շարժման։ Ձերբակալված են մայրաքաղաքից եկած 17 ագիտատորներ։

ՆԻՒ ԵՈՐԿ, 8 օգոստոսի։ Մարտինիկա կղզում զգացվել են ստորերկրեայ մի քանի ուժեղ հարուածներ։ Հավաննում երևան է հանված մի դաւադրութիւն, որի նպատակն է եղել յեղափոխութիւն առաջ բերել և նախագահ Մալմին սպանել։ Յեղափոխականների դէմ զօրքեր են ուղարկվելու։

ՄՕՍԿՎԱ, 8 օգոստոսի։ Ռուս-չինական բանկի Մոսկվայի բաժանմունքից կեղծ ընկալագրով ստացված է 20,000 ռուբլի։—Քաղաքապետը արգելել է ժողովրդական ազատութեան կուսակցութեան 2 րայօնների անդամներին՝ միացեալ ժողով գումարել։

ԻԺՕՎԿԱ, 8 օգոստոսի։ Անակնկալ խուզարկութեան ժամանակ գրաված են տեղական յեղափոխական կօմիտետի կարևոր արձանագրութիւնները և ուրիշ շատ թղթեր։ Մի քանի հոգի ձերբակալված են։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 օգոստոսի։ «Истина» շաբաթաթերթի խմբագիր Սիմէնովը դատաստանական պալատից մեղաւոր է ճանաչված զօրքին վիրաւորելու մէջ և դատապարտված է 1 ամսվայ բանտարկութեան հաւպտվախտում, զրկվելով միաժամանակ խմբագրի և հրատարակչի իրաւունքից 3 տարով։ Թերթի հրատարակելն արգելված է ընդմիշտ։

ՎԱՐՇԱՎԱ, 8 օգոստոսի։ Արգելված է փողոցներում լրագիր և շաբաթաթերթեր վաճառել։ Փողոցներով անցնողները շարունակ խուզարկութեան են ենթարկվում։ Երեկոյեան ժամը 8-ին քաղաքի բոլոր խանութները փակվում են. քաղաքը մեռնում է. իսկ ժամի 10-ին քաղաքի վրա տիրում են համատարած խաւարը և խորհրդաւոր լռութիւնը։

Կ. ՊՕԼԻՍ, 8 օգոստոսի։ Յունաց եկեղեցիներում հանդիսաւոր հոգեհանգիստներ են կատարվել Բօլգարիայում ջարդերի ժամանակ ընկած նահատակների յիշատակին։ Պատրիարքը ճառ է արտասանել բօլգարների բռնութիւնների առիթով և յորդոր է կարդացել յոյներին՝ հանդիստ մնալ։ Եկեղեցու առաջ բօլգարների հասցէին բացականչութիւններ են եղել։

ԲԵԼԳՐԱԴ, 8 օգոստոսի։ Նոր նշանակված անգլիական դեսպանը Թագաւորին յանձնեց դեսպանական ընծայագիրը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 օգոստոսի։ (Պաշտօնական)։ Բարձրագոյն ռեսկրիպտ, տրված Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլաեվիչի անունով. «Ձերդ Կայսերական Բարձրութիւն. Հանգստի և բաւարարութեան մի առանձին զգացմունքով եմ յիշում այն ժամանակը, որ անցրի Ես Կրասնօ Սէլօում Իմ սրտին շատ մօտ՝ Պետերբուրգի զինուորական վիճակի և կայսերական թիկնապահ զօրքերի մէջ։ Օգոստոսի 1-ի դիտողութեան (смотръ) ժամանակ Կրասնօսէլսկի բանակի մասերը Ինձ ներկայացան փայլեցիկ զրութեամբ և կարգ ու կանոնով, արի և հաստատակամ անցնելով Իմ առջևից հանդիսաւոր գնացքով։ Հասարակական կարգ ու կանոնը պաշտպանելու համար անցեալ ձմեռվայ ընթացքում բոլոր զօրքերին տուած ծառայակցական դժուարին ու ծանր պահանջները, ըստ երևոյթին, չեն սասանեցրել ու երերել զօրամասերի միասնութիւնը ու անբաժանելիութիւնը և զինավարժութեան միակերպութիւնը և ամբողջութիւնը։ Օգոստոսի 2—5-ը ներկայ լինելով բանակային զօրամասերի դաշտային վարժութիւններին, հետևելով զօրքերին տուած ռազմական պարտականութիւնների զարգացման և կատարման, Ես մի առանձին հաճոյքով նկատեցի, որ անցեալ պատերազմի փորձերը և ցուցմունքները ընդարձակ չափով և անդադար գործադրվում են բոլոր տեսակի զօրամասերում, և դաշտային պատրաստականութեան գործին, մեծից սկսած մինչև փոքրը, վերաբերվում են լիակատար ուշադրութեամբ։ Չը նայած բանակային զօրամասերի պարապմունքները յաճախ ընդհատվում էին մայրաքաղաքում և նրա վիճակի շրջաններում ծագած անկարգութիւնների պատճառով, բայց և այնպէս զինավարժող զօրքերը իրանց գործը կատարում էին մտածված, խիստ կարգապահութեամբ և ըստ մեծի մասին վերին աստիճանի ճարտարութեամբ։ Ձերդ Կայսերական Բարձրութեան զօրաց ղեկավարութեան առաջին, բայց բացառիկ պայմաններով լի տարին ցոյց է տալիս Ինձ, որ Ձեր պահանջների մէջ Ձեր դրած զինուորական գործի ժամանակակից զարգացմանը համապատասխան և ողջամիտ սկզբնափորձերը միանգամայն շօշափելի հետևանքներ տուին։ Արտայայտելով Ձերդ Կայսերական Բարձրութեան Իմ սրտագին և խանդավառ ողջագուրանքը այն աշխատանքների համար, որ կատարեցիք Դուք Իմ Ձեզ յանձնած զօրքերը զինավարժելու և կրթելու գործում, Ես խորապէս համոզված եմ, որ Իմ զգացմունքներս արձագանք կը գտնեն Իմ սրտին այնքան թանկագին զօրքերի և նրանց հրամանատարների մէջ, և որ Ձեր աշխատանքները կը ծառայեն իբրև գրաւական հանուր ռուս զօրքի բարգաւաճման և առաջընթացման։ Յանձնարարում եմ Ձեզ Իմ շնորհակալութիւնս յայտնել Ձեր մօտիկ աշխատակիցներին և բոլոր հրամանատարներին, իսկ զինուորներին ասել Իմ «սպասիբօ»-ն։ Սրտով Ձեզ սիրող և շնորհապարտ՝ ՆԻԿՕԼԱՅ»։

9 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 օգոստոսի։ Ներքին գործերի մինիստրը դիմել է մինիստրներին և գլխաւոր հրամանատարներին, առաջարկելով ներկայացնել իւրաքանչիւրը իր հերթին իրանց ենթակայ վարչութիւնների գործունէութեան մասին ունեցած սեփական կարծիքները։ Մօտիկ ապագայում վերոյիշեալ կարծիքները կը քննվեն մինիստրների խորհրդում իրար հետ համակերպելու համար, որ թերևս այդպիսով կարելի լինի մի եզակի կառավարութեան ձև մտցնել յիշեալ վարչութիւնների մէջ։

Յուլիս ամսվայ ընթացքում դադարեցված է 230 անձանց գործերի յետագայ քննութիւնը, տուգանքից վերջնականապէս ազատել են 267 հոգու, իսկ 39-ին թոյլատրված է գնալ արտասահման։

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրը հաստատել է նոր ծրագիրներ, որ վերաբերում են ռէալական դպրոցներում աւանդվող ռուսաց լեզուին, մաթեմատիկային, աշխարհագրութեանը, բնագիտութեանը և օրէնսգիտութեանը փոփոխելով դասերի թիւը և դասաւորելով նրանց համաձայն առարկաների թիւ։ Ռուսաց լեզուի նկատմամբ դասագիրքը ճոխացվելու է ժամանակակից գրողների հեղինակութիւններով, ոչնչացված է եկեղեցա-սլաւոնական լեզուի ուսուցումը, բնագիտութիւնը բաժանված է՝ նախապատրաստական և սիստեմատիքական դասընթացքների. 5-րդ դասարանում աւանդվելու է քիմիա, 6-րդում՝ քիմիայի գործնական փորձեր։ Օրէնսգիտութիւն մտցվում է ռէալական դպրոցներում առաջին, ուստի և այդ առարկայի ծրագիրը փոփոխված է, ի նկատի ունենալով Ռուսաստանի պետական կազմի փոփոխութիւնը։

Քաղաքս ժամանեց գեներալ Ռէննէնկամպֆը և նոյն օրն և եթ մեկնեց Պետերհօֆ։

ՍԵԴԼԵՑ, 8 օգոստոսի։ Ոստիկանապետ Գօլցէվի վրա ռումբ նետվեց։ Կտրված են գեներալի 2 ոտքերը, իսկ կէս ժամից յետոյ ինքը վախճանվեց։ Միաժամանակ վիրաւորված են ֆելդշէրը, մի պահակ և 2 կին։

ՍԱՄԱՐԱ, 8 օգոստոսի։ (Պաշտ. Թղթ.) Գիշերս, իր բնակարանում սպանվել է Բօրիսօվսկի գնդի հրամանատար գնդապետ Գէօրգեան։ Յանցաւորները դիակը թրջել են նաւթով և ապա բնակարանի հետ միասին այրել։

ՎԻԵՆՆԱ, 8 օգոստոսի։ «Նէյիէ Պրէսսէ» տեղեկացրել է Կ. Պօլսից, որ Բ. Դուռն դեսպաններին տուած հրահանգի մէջ աչքի է զարնում հետևեալը.—Բ. Դուռը յոյս ունի, որ Եւրոպան թոյլ չի տայ Բօլգարիային՝ պրօվօկատոր-գործակալի տեղ խաղալ Բալկանեան թերակղզում։ Կ. Պօլիս ապաստանած փախստականները պատմել են տեղական յունաց մաքսատան մէջ, որ Անգլիան գուշակում էր, նախօրօք, որ յունական ջարդեր տեղի կունենան։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ, 8 օգոստոսի։ Երկաթուղով ուղարկվեցին զինուորական ապստամբութեան գործի առաջին խմբակի դատապարտված նաւաստիները։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 օգոստոսի։ Պետական Դումայի նախկին անդամ Օնիպկօին դատարանին յանձնելու մասին տարածված լուրերը այնքան էլ ճիշտ չեն։ Նրա գործը դեռ քննութեան շրջանի մէջ է, որի հետևանքն էլ յայտնի չէ որովհետև մեղադրական ակտը դեռ չէ կազմված։

«Воля» լրագրի խմբագիր Կօրէցկին, դատաստանական պալատի վճռով, դատապարտված է 1 տարվայ բանտարկութեան, զրկվելով խմբագրի պաշտօնից 1 տարով. «Воля»-ն դադարեցրած է ընդմիշտ։ Մեղադրական գլխաւոր կէտը՝ «Баку» լրագրից մի յեղափոխականի թաղման նկարագրութեան արտատպութիւնն է եղել։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Գոլովինսկի, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզանձ. հ.
Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԽԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Ի. Կ. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ՎԱՐԴԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԴՈԿ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. [illegible] և կանանց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Մ. ՓՈՒԴԻՆՕՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և նեարդային։
Խ. Ա. ԱՐԵՒԵԱՆՑ—7—7½ ժ. ներքին և երեխայոց հ.
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ [illegible] համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նախասարդեան

Ս. Գ. Շերմազանեան
Ընդունում է հիւանդներին ամեն օր 9 ժ.—2 ժ. և երեկոյեան 4—7 ժամը։ Երևանեան հրապարակ, տ. Գուրգէնօվի № 7. պօդեզդ Նօտար Մղերօվի։ (Ե.Հ.Հ.) 38—100

ԲԺԻՇԿ
Լևոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ., կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօլովինսկի պրօսպէկտի և Կազենտկայեա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կազենտկի փողոցից № 2. (ա. օ.) 207—300

ԲԺԻՇԿ
Գ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ
Ներքին և երեխայոց, մասնաւորապէս կրծքի հիւանդութիւններ։
Հիւանդների քննութիւնը և բուժելը կատարվում է ճառագայթներով առաւօտեան ժամը 10—11 և երեկոյեան 5—7։
Բոսէնէվսկայա փող. տ. № 7 (Վէտցելի հիւրանոցի մօտ)։ 1—30

Թիֆլիսից մեկնելու պատճառով
ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
Կարաեվի կահաւորված
ՀԻՒՐԱՆՈՑԸ,
որը գտնվում է Բաղէժնայա փողոցում № 4 տան մէջ, Վօրօնցովի արձանի մօտ։ Հարցնել նոյն տեղում, հիւրանոցի տէր՝ Կարաեվին։ 1—1

Մի տիկին, որ 5 տարի շարունակ հաշուապահութեամբ է պարապել, որոնում է յարմար պաշտօն։ Հասցէն՝ «Մշակի» խմբագրատուն։ 2—3

ՆԿԱՐԻՉ Ա. ՖԵԹՎԱՃԵԱՆԻ
ակվարելներից ֆաքսիմիլէ պատրաստված
ԱՆԻԻ ՏԵՍԱՐԱՆՆԵՐԻՑ
Գունաւոր ալբոմներ
ստացվել են արտասահմանից և ծախվում են Թիֆլիսում՝ Գուտտենբերգի գրավաճառանոցում, Գնունու և Մարիմի վիմագրական արհեստանոցում, Բաթումում՝ Արմենակ Ֆեթվաճեանի մօտ, Օդեսսայում՝ Զարեհ Սարգսեանի մօտ։
Ալբոմի հատը 1 ռուբ. 20 կոպ.։
Անիի պատկերները ծախվում են և իբրև պօստ-կարտեր, բաց նամակներ, զոյգը 15 կոպ., ժանրային պատկերներ՝ հատը 10 կ., հազարով գնողները կը ստանան 20°/o զեղչ։ Պօստի, ծրարման և փոխադրութեան հարկաւորված ծախսերը գնողների հաշւով են։
Արտասահմանում պատուիրողներին ձեռնտու է դիմել Վիեննա՝ Vienne, Boghos Kürkdjian-ին։

Պահանջեցէք ամեն տեղ «ՕԴՕԲՐԻՆ»
Միայն Միխաիլ Լեբեդևի
„Этикетъ утвержденъ прав." մակագրութեամբ

Գլխաւոր պահեստը զեղագործական ապրանքների վաճառման Կովկասեան ընկերութեան մէջ—Թիֆլիս, Բագու, Բաթում։
10, 20, 30 12—40

Գանձակում տեղի ունեցած ընդհարումների պատճառով ես տեղափոխեցի իմ կենտրոնական ՀԻՒՐԱՆՈՑՍ շքեղ կահկարասիներով Թիֆլիս, Պուշկինսկի փողոցի վրա № 23, պրավօսլաւնի հոգևոր սեմինարիայի դիմաց
„ՆՈՄԵՐԱ ՑԵՆՏՐԱԼ"
մականունով։ Գները 70 կոպէկից մինչև 2 ռուբլի։ Ամսական ցանկացողների հետ առանձին պայմաններով։
Ալէքսանդր Ցարուխինով
(Հ. Կ. Ե.) 45—100

ԲԱՆՈՒՈՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Լոյս տեսաւ՝
1. Հայրենասիրութիւն, Կ. Կաուցկու . . . 3 կ.
2. Պետական Դուման . . . . . 3 »
3. Կորչեն սօցեալ դէմօկրատները, Վ. Բրակէի . . . . 10 »
4. Ազգային հարցը և սօցիալ-դէմօկրատիան, Ս. Շահումեանի . . . . 10 »
Հասցէն՝ «Կայծի» խմբագրատուն։ 2—3

Գիմնազիայի դասընթացքն աւարտած և տնային ուսուցչուհու ցենզ ունեցող
Մի օրիորդ,
որը մի տարի պարապել է հայոց դպրոցում, ցանկանում է ուսուցչուհու պաշտօն ունենալ նահանգական և կամ գաւառական քաղաքների հայոց դպրոցներում։
Հասցէն. Петровскъ, Дагест. обл., священнику Аршену Маркарьянцъ.
(Շ. Ե. Հ.) 4—5

ՎԱՐՁՈՒ Է ՏՐՎՈՒՄ
Գայիանեան օրիորդաց դպրոցի ներքևի յարկը (Սօլոլակ, Պասկևիչի փողոց, տուն Տէր-Ասատուրովի № 13) 3—3 կամ միասին 6 ՍԵՆԵԱԿՆԵՐ և այլ յարմարութիւններով։ Դիմել դռնապան Յարութիւնին։

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
Թիֆլիսի գրավաճառների մօտ
ԼԵՒՈՆ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆԻ
փոխադրած՝
Մանկական պատկերազարդ ու էժան հետևեալ գրքոյկները
ՓՈՔՐԻԿ ՅՈՒԼԱԿՆ
ՈՒ
ԽԼԸՇԻԿ ՆԱՊԱՍՏԱԿԸ
Գինը 55 կոպէկ
—
ՆԱՊԱՍՏԱԿ ԽԷԶԱՆԻ
ՎՐԷԺԽՆԴՐՈՒԹԻՒՆԸ
կամ
ԻՆՔԴ ՔԵԶ ՕԳՆԻՐ
Գինը 40 կոպէկ
—
ԱՌԱՋԻՆ ՎԱՍՏԱԿ
Գինը 40 կոպէկ
—
Եւ թարգմանած՝
ՈԳԵՀԱՐՑՈՒԹԻՒՆ
3 արարուածով պիէսը
Գինը 50 կոպէկ։
Ցանկացողները կարող են դիմել նաև.
Тифлисъ, Орбеліановск. ул. № 24 Левону Меликъ-Адамянъ.
(Շ. 1) (Հ) 9—20

Թարգմանվում է
А. Б—ій
«Что такое народовластіе и для чего это нужно народу?»
Վ. ԽՈՐԷՆԻ
(Հ. Հ.) 2—2

Կարսի հայոց եկեղեցու ծխական երկսեռ դպրոցի համար հարկաւոր է համալսարանաւարտ փորձված աւագ ՈՒՍՈՒՑԻՉ։ Ցանկացողները կարող են յայտնել իրանց պայմանները։
Հոգաբարձութիւն
(Ե. Հ. Շ.) 2—4

Ներսիսեան դպրոցում սովորող փոքրիկներին խնամելու համար, Գ. Ճեմարանի ընթացաւարտ
ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ
ցանկութիւն ունի տեղափոխվել Թիֆլիս։ Պայմանների մասին խնդրում է դիմել մինչև օգոստոսի 22-ը, հետևեալ հասցէով՝ Шемаха, Арутюну Аракелянъ Матевосянцъ.
2—2

Մօտ օրերումս կուղարկվի տպագրական գործերի Թիֆլիսի կօմիտէտին և ապա, ոչ ուշ օգոստոսի 10—15-ից, լոյս կը տեսնի (միայն 480 օրինակով)
ԷՄԻՆ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ ՆՈՐ ՊԻԷՍԸ
ՍՈՒՐ ԵՒ ՀՈՒՐ
(Ո՞վ է մեղաւոր)
Եպիզոդներ հինգ արար. եւ ապոթէօզով
1905 թ. հայ-թուրքական ընդհարումներից
Արարուած I—Գիշատիչ թռչուններ. II—Դատապարտելի անհոգութիւն. III—«Շէյթանի» գործերից. IV—Մարմնացած թշնամութիւն. (կանգնել է Իսլամը) և V—Ակն ընդ ական։
Ապոթէօզ։
ԳԻՆՆ Է 1 ՌՈՒԲԼԻ
Միանուագ 10-ից աւելի կանխիկ վճարով գնողներին—20°/o, 30ից—25°/o և 50-ից—35°/o զիջումն է լինելու։
Դիմել միմիայն հեղինակին այսպէս. Эмину Теръ-Григорянцу. (Հ. Կ.) 5—15

Սամարղանդի հայոց երկսեռ ծխական դպրոցի համար հարկաւոր է մի ուսուցիչ (ճեմարանաւարտ կամ Ներսիսեանաւարտ) շաբաթական 24—26 դասով։ Ռոճիկ 720 ռուբլի, բնակարան և վառելիք. և ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ (գիմնազիաւարտ) շաբաթական 20—22 դասով. ռոճիկ միայն 500 ռուբլի։ Հասցէն՝ Самаркандъ, Николаевская ул. № 8. Попечительству Армянск. училища. (Շ. Ե. Հ.) 4—4

ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառային գնացքների երթևեկութիւնը)

(Ժամերը հաշւած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը Թիֆլիսի ժամանակով)։

	Փոստային	Մարդատար.	Արագ.	Ապրանք.
Բագուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ, 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր. գիշ.
Թիֆլիս հասնելը	11 » 26 » »	5 ժ. 25 ր. առ.	1 ժ. 30 ր. գիշ.	9 ժ. 37 ր. երեկ.
Թիֆլիսից դուրս գնալը	12 » 26 » »	6 ժ. 01 ր. առ.	—	—
(Թիֆլիսի ժամանակով)	1 » 24 » »	6 ժ. 59 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 38 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 22 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 39 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 37 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40 ր. գիշ.
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 35 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38 ր. գիշ.
Բագու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր. ցեր.
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր. գիշ.
Կարսից » »	3 » 57 » »	—	—	3 ժ. 12 ր. գիշ.
Ալէքսանդրապօլից դուրս գալը . .	7 » 38 ր. եր.	—	—	7 ժ. 06 ր. առ.
Թիֆլիս հասնելը	5 » 06 » առ.	—	—	4 ժ. 49 ր. ցեր.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 12 » գիշ.	—	—	3 ժ. 25 ր. ցեր.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 10 » »	—	—	4 ժ. 23 ր. ցեր.
Ալէքսանդրապօլից դուրս գալը . .	10 » 30 » առ.	—	—	2 ժ. 47 ր. գիշ.
Երևան հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	6 ժ. 10 ր. գիշ.
Կարս հասնելը	4 » 23 » »	—	—	8 ժ. 48 ր. առ.

„ՎԵՐՍԱԼ"
[ՀԻՒՐԱՆՈՑ]
Քաղաքի ամենակենտրօնական մասում
Վօրօնցովի արձանի մօտ,
ուր շղկապվում են տրամվայի բոլոր գծերը։ Համարները սկսած 1 ռուբլուց և աւելի։ Յարմար կերպով կահաւորված համարներ՝ բոլոր յարմարութիւններով։ Բաղանիք, դուշ, տէլէֆօն, էլէքտրական լուսաւորութիւն ընդհանուր շինութեան մէջ։ Օդի և լոյսի առատութիւն։ Կատարեալ մաքրութիւն և կարգապահութիւն։ Խնդրում ենք չը լսել գործակալներին, երբ թէ ազատ համար չը կայ և այլն։
(Կ. Ե. Հ.) 9—24

Ֆինանսների նախարարութեան իրաւասութեան տակ գտնվող
ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ
Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշուապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների նախարարութեան ուսումնասիրական բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում։
ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ
Երկու սեռի անձանց՝ գործնական ձևով հաշուապահութիւն 4 ամսում։
Ներկայ տարվայ կուրսերում բացի սովորական մասնագիտական առարկաներից աւանդվելու է ձրիաբար քաղաքական տնտեսութիւն (политическая экономія) և որոշ վճարով կամաւոր սղագրութիւն (стенографія)։
Ընդունելութիւնն ամեն օր ժամը 5-ից մինչև 7-ը երեկոյեան և 9-ից մինչև 11-ը առաւօտեան։ Պարապմունքները սկսվելու են սեպտեմբերի 15-ից, պարբերական ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ։ Ծրագիրն ուղարկվում է ձրի։
Դասընթացը աւարտողներին տրվում են ֆինանսների նախարարութեան թոյլտրված ծրագրի համաձայն, ատեստատներ։
Դրանից զատ, բացված է նաև պատրաստութիւն ունեցող անձերին համար առանձին լրացուցիչ և կրկնողութեան կուրսեր ռուսաց լեզուի և թւաբանութեան համար։
Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին Թիֆլիսում Н. В. Абраамяну, Николаевская ул. № 22, ամենայն օր։
Վերևում յիշած ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու. ԳԻՆՆ Է 3 ր. 50 կոպէկ։ (Հ. Կ. Ե.) 12—20

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.
Электропечатня типографскаго Т—ва «Гермесъ» Мадат. ул. № 5